

# ՆՈՐ ԿԵԱՆՔ



ՀԱՆՏԻՍ ԱՁԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԽՍՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Հա՛րկ է ըսել թէ այս վերնագրին մէջ գտնուող յարակցութիւնը՝ արդէն գոյութիւն ունեցող բան մը չէ։ Խաղաղութեան Համաժողովին, այնպէս ինչպէս առաջադրուած է, եւ Հայերու միջեւ, առնչութիւն մը չի կայ։ Անոնք որ այս զէնքերու բռնանք տակ հեւացող ու վաղուան նախնիներուն վախովը անձկալիբ դարավերջին միջնադար լուսաւորել կ'ուզեն՝ ազգերու միջեւ խաղաղութեան ու եղբայրութեան արշալոյսի մը գալստեան ցոլբերովը, անոնք որ յառաջիկայ ամիս Լա Հէ պիտի գումարուին՝ խորհրդակցելու համար այդ արշալոյսը ժամ առաջ ողջունելու, դէպի ան ընդ առաջ երթալու միջոցներուն վրայ, անոնք՝ ապահովապէս՝ իրենց մտածութիւններուն մէջ այժմ շատ քիչ — եթէ ոչ բնաւ — տեղ մը կուտան մեր տառապանքներուն եւ անոնց բարձումին։ Խաղաղութեան Համաժողովին եւ հայկական խնդրին միջեւ այսօր կապ մը չի կայ։

Այդ կապը ստեղծել անկարելի չէ։

\* \*

Երբ Ռուսիոյ ձարը իր հրաւերը ուղղեց պետութեանց միանալու եւ խորհրդակցելու՝ աստիճանաբար զէնքից ցութեան եւ խաղաղութեան առաջնորդելիք միջոցներուն վրայ, «Նոր Կեանք»-ի մէջ փութացինք յայտնել թէ ծանուցուած Համաժողովին ատենը մենք Հայերս ալ ձայն մը ունինք բարձրացնելիք։ Նոյն մտածումը յետոյ ուրիշ կողմերէ ալ արձագանգուեցաւ, ու քիչ քիչ ճամբայ առաւ ամէն խաւերու մէջ։ Հայկական դատին բարեկամ եւրոպական բարձր անձնաւորութիւններ մեզ հաստատեցին յետոյ մեր այն համոզմանը մէջ թէ հայկական դատին նպատաւոր ու նպատակայարմար դիմում մը պիտի ըլլար այն որով Պետութեանց պատուիրակներուն համաժողովին ներկայացնելիք դարձեալ մեր խնդիրը, ե յիշեցնելիք իրենց մեր ցաւերը եւ իրենց խոստումները։

Հիմա ժամանակ է իրադրոճելու այդ խորհուրդը։ Ազգէն բոլոր, մեր ընկերութեան ամէն կարգերէն ժայթքած դիմում մը ըլլալու է ասիկա։ Եւրոպայի առջեւ, աշխարհի առջեւ որ հաւաքուած պիտի ըլլայ Հոլանտայի մայրաքաղաքը, մեր գոյութիւնը, մեր խնդիրը, մեր տառապանքները եւ մեր ակնկալութիւնները հաստատելու ենք արժանաւորապէս ու խրոխտօրէն։ Մեր ցաւը այդ իրաւունքը կուտայ մեզի ու այդ պարտքը կը դնէ մեր վրայ։

Պէտք չունինք այս հանդիսաւոր պարագային մէջ «բաղաբազմութիւն» ընելու, վարպետութիւններ փորձելու, ճարտարութեան մրցումի ելլելու պետութեանց պատուիրակներուն հետ։ Պարզ, բնական, անսեթեւեթ, ու մանաւանդ անկեղծ շեշտով մը, մեր խնդիրը ներկայացնելու ենք պետութեանց պատուիրակներուն։

Լաւագոյն ու յարմարագոյն ձեւը՝ թանձրացեալ կերպարանք մը հաղցնելու այս ծրագրին, կարելի եղածին չափ ընդարձակ սահմանի մը մէջ ու կարելի եղածին չափ հաւաքական կերպով Համաժողովին դիմելն է յիշատակագրելիք մը ու խնդրագրելիք։

Այդ պարտքը կը ծանրանայ մասնաւորապէս հայրենիքէն դուրս, արտասահման գտնուող բոլոր հայ գաղութներուն, բոլոր կազմակերպեալ մարմիններուն, բոլոր անհատներուն վրայ։

Փրանսերէն լեզուով, — որովհետեւ Համաժողովին խորհրդակցութեանց ու ատենագրութեանց լեզուն, միջազգային դիւանագիտական սովորութեանց համաձայն, Փրանսերէն պիտի ըլլայ, — բայց ի հարկին անգլիերէն ու ռուսերէն լեզուով ալ այդ յիշատակագրելիքը ու խնդրագրելիքը աշխարհիս ամէն անկիւնէն ուր հայ գաղթականութիւն մը կամ Հայ մը կը գտնուի, սեղացնելու է Լա Հէ, Խաղաղութեան Համաժողովին։

\* \*

Ինչպէս խմբագրուած ըլլալու են այդ յիշատակագրերն ու խնդրագրերը։

Կը կրկնենք, որչափ աւելի պարզ ու սրտբաց զրուած ըլլան անոնք, այնքան աւելի լաւ է։ Մեր ցաւը այնքան ծանօթ է, այնքան տրտմօրէն հանրաժանօթ, որ զայն պատմելու ա'լ կոկիծելի ու մորմուքիչ հոգէն կ'ազատէ մեզ։

Մեր խնդիրը արդէն միջազգային քաղաքականութեան մէջ մէկէ աւելի անգամներ սուր եւ սպառնական հանգամանք առած, ա՛յլ դիւախազիտութեան պարութային մէջ իր որոշ տեղը ունի. զայն փնտոելու հողը չունին ա՛յլ, զի տեն իր տեղը, իր սքաւոր անկիւնը, ուր հիմակ թաղուած կը մնայ ան:

Մեր ընելիքն է լսկ յիշեցնել իրենց նորէն անոր զոյութիւնը, անոր յամառ, անկորնչելի կենսականութիւնը, մեր արիւնով թուրմ, մեր արիւնով սնած:

Առանց յոխորտանքի, բայց նաեւ առանց սարուկ պաղատանքներու, ամէն ոք իր հասկցած կերպովը թող յիշեցնէ ատկա պետութեանց պատուիրակներուն:

Ընդհանուր դժեր կան սակայն որոնք մտածելու եղանակի մը ուղղութիւնը կրնան թելադրել սննդից որ պիտի ձեւնարկեն այս գործին:

Խաղաղութեան Համաժողովին անունը, զոյութեան պատճառը ու առաջադրութիւնը առիթ մը ըլլալու են մեզի՝ նորէն հաստատելու այդ յիշատակագրերուն սկիզբը թէ մենք Հայեքս Խաղաղութեան Ժողովուրդ մըն ենք, թէ մեր պատմական դերը եղած է արեւմուտքի քաղաքակրթութեան նախակարգապետը ըլլար Ասիոյ մէջ, և թէ մեր սըրտազին բաղձանքն ըլլալով լոկ Խաղաղութեան մէջ զարգանալ եւ մեր աշխատանքովը տիրանալ բոլոր այն բարիքներուն որոնք մարդկութեան անձեռնմխելի իրաւունքն են, սրտեանդն ողջոյն մը կը զրկենք անոնց որոնք այդ Խաղաղութեան հասնելու միջոցները կը խորհին:

Յիշեցնելու է յետոյ մեր տառապանքները հակիրճ կերպով, եւ թէ ինչպէս Եւրոպան քանի քանի անգամ դաշնադրերով, յիշատակագրերով եւ բարենորոգման ծրարագիրներով խոստացած է մեզի մարդկային էակին ամենատարրական իրաւունքները որոնք մեզի զլացուած են այժմ:

Մեզի խօստացուած այդ իրաւունքներուն ուշանալը, նարկաշորաբար, վտանգի աղբիւր մըն է Խաղաղութեան տիեզերական ներդաշնակութիւնը աւրող: Մեր տառապանքը եթէ չբարձուի, միշտ պիտի վրդովէ մարդկութեան խիղճը, եւ մեր բողոքները, զորոնք չենք կրնար լռել, չարաձայնութիւն մը պիտի բերեն միշտ Խաղաղութեան օրհններու ընդհանուր ուխտանային մէջ:

Եւելորդ է ըսել որ սպանական ու եւ է հանգամանք ունենալու չեն այս ցուցումները:



Այս ընդհանուր դժերուն համաձայն խմբագրուած յիշատակագրեր կարելի եղածին չափ շատ թուով զրկուելու է Լա Հէ:

Պէտք չէ վարանիլ այդ յիշատակագրերուն տրուելիք ոճին ու ձեւին առջեւ: Միամտութիւնը չունենանք կարծելու թէ Համաժողովին անդամները տող առ տող պիտի կարդան ու մանրակրկիտ կերպով կշռադասեն զանոնք: Անշուշտ այդ յիշատակագրերը որչափ աւելի լաւ զրուած

ըլլան, այնչափ աւելի աղէկ: Բայց էականը՝ ըլլալիք դիմումին հաւաքականութիւնն է, մեր խնդրին հաստատումը՝ մեր կողմէն, եւ ո՛չ թէ ոճին աւելի կամ նուազ մաքրութիւնը, ձեւին աւելի կամ նուազ գեղեցիկութիւնը:

Այս դիմումը կուսակցական ու եւ է հանգամանք ունենալու չէ: Ազգն է որ պէտք է խօսի իր ամէն զաւակնեւրուն բերնովը: Հայկական խնդիրը ամբողջ ազգինն է, որ Եւրոպայի եւ աշխարհի առջեւ՝ իր զոյութիւնը եւ իր յոյսերը հաստատելու է այս հաւաքական ու արժանաւոր ցոյցով:

### ՀԱՅԵՐԸ ԵՒ ՌՈՒՍԻԱ

(Շար. Առաջին գլուխ, և վերջ.)

Առաջին յօդուածով կը պարզէինք 1860ի վարոցին հակառու ուղղութեան գլխաւոր շարժառիթը. այդ տեսութիւնը կը շարունակենք:

Գէորդ Դի մահուամբ 1882ին վերաբացուեցաւ կաթողիկոսական ընտրութեան եղանակին խնդիրը. լուծումը զիրաջնելու համար Ազգային Երեսփոխանութիւնը յանձնաժողով մը կազմեց նախադասութեամբ Ներսէս պատրիարքի եւ ատենապետութեամբ Սերովիչէի: Այդ մարմինը իտալական կանոններ ծրարեց առանց ուշադրութեան անելու Պալաժէիան, իբր այն թէ հնարաւոր ըլլար Ռուսիոյ օրէնսդրութիւնը ենթարկել թիւրքիոյ Հայոց երեսփոխանութեան որոշումներուն: Յանձնաժողովին անգամներէն մէկը առաջարկեց ամենայն Հայոց կաթողիկոսին ընտրութեան անկախութիւնը ապահովել մեծ պետութիւններուն միջամտութեամբը, նկատելով որ Էջմիածնի հայրապետը ոչ թէ միայն Ռուսիոյ այլ եւ ուրիշ պետութիւններու հպատակ Հայոց ալ հոգեւոր պետն է:

Նախորդ սերունդին պատկանող ազգային վարիչները հիմնովին ուսումնասիրած չէին Ռուսիոյ ներքին կազմակերպութիւնը: Հայոց հանրային կեանքին առաջնորդները երբ անկանխակալ մտքով ուշադիր չեն երեւիր Ռուսիոյ քաղաքականութեանը, եւ չեն իմաստասիրեր մեծ պետութեան զարգացումին ու բնաշրջումին պատմական օրէնքները, թէ՛ իրենք կը սխալին եւ թէ՛ իրենց հետ ժողովուրդը կը մոլորեցնեն:

Կ. Պոլիս նոր սերունդ մը 1884ի եւ 1885ի կաթողիկոսական ընտրութիւններուն ատեն արդէն կը ձգտէր հանրային խնդիրները ուսումնասիրել իրականութեան առաջնորդութեամբը: Քաղաքական իրապաշտութեան այս զարցոյցը հայ ժողովրդին պարզեց Ռուսիոյ ներքին կազմակերպութեան գլխաւոր դիմերը: Յոյց տուաւ թէ կրօնքի զատութիւնը բնաբարոզ Պալաժէիան յատկապէս Հայոց եկեղեցիին համար չէր օրէնսդրուած. — կանախտաւոր վր

րութիւն եւ սինօյի մէջ պրօհաշորի ներկայութիւն պարտաւորիչ օրէնքներ էին ձարին հպատակ բազմապատան եւ բազմազան ամէն ցեղերուն համար ալ, ուստի եւ Հայոց նպատակաւ բացառիկ տնօրինութիւն մը անյուշալի էր: Ան ճշմարտութիւնը ըմբռնելէ յետոյ ա'լ անօգուտ պիտի երեւնար Պալաժէնիոյ զէմ մարտնչութիւն անընդհատ շարունակութիւնը: Հայաստանեայց եկեղեցիին շահերը գործնական միջոցներով պաշտպանելու գաղափարը ծնաւ եւ ընդհանրացաւ իբր բնական հետեւանք այս յուսահատական համոզումին: Եւ ահա 1892ին Հայ ազգը մէկ ահունի մը շուրջը միաբանելով կրցաւ իր իրաւունքները անարգել գործադրել:

Այս ընտրութենէն առաջ սակայն Կ. Պոլսոյ Ազգային Երեսօխոսանութիւնը 1883ին կարեւոր որոշում մը տուած էր: Ռուսիոյ կայսրը կաթողիկոս վաւերացուցած ըլլալով Էջմիածնի ընտրողական մարմնէն կաւետարան նշանակուած Մակար եպիսկոպոսը, Ազգային ժողովը ընդունեց այս տնօրինութիւնը: Համակերպութեան քաղաքականութիւնը պաշտպանողներուն պարագլուխներէն ոմանք հակառուտ գաղափարներ տածող էին, բայց այս պարագային հեռատեսութեամբ նշմարեցին ընդդիմադրութեան մը վրտանդները: Կայսերական վաւերացումին արհամարհանքը պիտի նկատուէր իբր ուղղակի կայսեր անձին զէմ թշնամանք թիւրքիոյ Հայոց ամբողջութեան կողմ:

Պալաժէնիայէն ծագած հակառուտ յուզումը քառորդ դար մը տեւելէ յետոյ երբ ա'լ հանգարտելու վրայ էր, ահա՛ երևան եկաւ Կովկասեան դպրոցներու ուսուցչութիւն ինչպէս Աղէար տաննեհէինգ տարի է կը շարունակուի օրէ օր աւելի լսօնատարած սահմաններու մէջ: Ոչ ոք կրնայ մեղադրել թիւրքիոյ Հայերը եթէ վշտահար կը մտլեգնին տեսնելով անպու գործադրութիւնը կրթական օրէնքներու որոնք Արարատ-Կովկասի Հայութեան գոյութիւնը ջնջելու սահմանուած են:

Սակայն մտածելու եղանակը սր մեղի առաջնորդեց Պալաժէնիոյ խնդրին մէջ, պէտք է նաեւ դպրոցական հարցին առթիւ ալ իբր ուղեցոյց ծառայէ մեզի: Արդ՝ Ռուսիոյ ինչպէս կրօնական նոյն եւ կրթական օրէնսդրութիւնը յատկապէս Հայոց համար չի գործադրուիր: Ռուսիոյ պետութեան ամբողջութեամբ եւ տեւողութիւնը կայսրութեան հարկը երեսուն միլիոն զանազան հպատակներուն ուսուցումին կը յուսացուի. ուստի և կեդրոնական կառավարութիւնը կը հետամտի լեզուով ու դաստիարակութեամբ ի մի ձուլել եւ ուսուցնել Հայն ու Ֆինլանտացին, Գերմանն ու Վրացին: Ան ալ իրականութիւն է: Բայց այս բոլոր իրականութիւնները կը հաստատեն թէ երբ Հայաստանի մնացած մասն ալ ուսակական նահանգ ըլլայ՝ հոն ալ աստիճանաբար պիտի գործադրուի ի մի ձուլումի ծրարը, իբր անխուտափելի պահանջում ուսակական շահերուն:

Կրօնական և կրթական խնդիրներուն յաջորդեց թըրքահպատակ Հայաստանի բարեկարգմանը հակառակող քաղաքականութիւնը, զոր եթէ ատելութեան զգացումներու վերածենք՝ նորէն կը մտարինք մեր ընթանալիք ճամբուն մէջ: Հայկական խնդրին համար Ռուսիոյ փոփոխութիւնը 1895ի վերջի կիսուն, իր շահերուն օրուան պահանջումին թեւադրութիւնն էր, Անգլիոյ երեսօխոսանական ընտրութիւններուն մէջ պահպանողական կուսակցութեան յաղթանակէն յետոյ: Ռուսիա 1883ին զմկամակեցաւ Արեւելեան Բուսկիի պուլիարացումին, եւ հիմակ ալ թիւրքիոյ հետ «իբ բարեկամական կապերը կ'ամրապնդէ», ըստ թաւեթ, խափանելու համար Մակեդոնիոյ շարժումը: Անշուշտ Ռուսիա սլաւ, օրթոտոքս ցեղերու թշնամի չէ: Բայց Ռուսիոյ կառավարութիւնը ո'չ Հայոց, ո'չ ալ Պուլիարներուն կամ Մակեդոնացիներուն շահերը մտածելու և պաշտպանելու համար գոյութիւն ունի. ամէն կառավարութեան պէտ ան ալ միայն եւ միմիայն ուսական շահերուն հոգածու է, եւ թիւրքիոյ քրիստոնեաներուն խնդիրները միշտ կ'ենթարկէ ատ շահերուն:

Եստ սխալ պիտի ըլլար ենթադրել թէ Ռուսիա Պերլինի վեհաժողովին պատասխանատուն Հայերը բռնելով, իբր փոխարինութիւն՝ մեզի զէմ վեհաժողովի քաղաքականութեան մը հետեւեցաւ անկէ ետքը: Իրողութիւնները հակառակը ցոյց կուտան: Բեդրպուրիի դահլիճը 1880ին միացաւ միւս հինգ պետութիւններուն եւ Հաստատանի բարեկարգութեան ծրարի մը պատրաստելով գործադրութիւնը պահանջեց. նոյն ժամանակները Ռուսիա տրամադիր էր հովանաւորել Հայկական խնդրաւարութեան մը նպատակաւ ապստամբական շարժում մը: 1895ի առաջին կիսուն նոյն Ռուսիան միացաւ Անգլիոյ և Ֆրանսայի՝ Հայաստանի բարենորոգումներուն համար: Ռուսիոյ արեւելեան քաղաքականութեան գերագոյն նպատակը թիւրքիոյ անընդհատ տկարացումն է. Հայկական խնդիրը այդ նպատակին հասնելու միջոցներէն մէկն է: Ռուսիա այժմ մեր դժբաղդութեան մէջ կը փնտռէ թիւրքիան ուժաստատ ընելու հիւանդութիւններէն մէկը. նոյն Ռուսիան կրնայ ի հարկին Հայաստանի հիմնական բարեկարգութիւնը թիւրքիոյ գլուխը ջախջախող լախտերէն մէկը համարել, ինչպէս 1880ին: Ի հարկէ վերջնական հաշուեյարդարութեան պահուն ամբողջապէս Հայաստանը իւրացնելու ծրարողը չի փնկուիր:

Այս տարրական ճշմարտութիւնները աչքի առջեւ ունենալու ենք միշտ որպէս զի ամէն մէկ քայլերնիս գիտակցօրէն առնենք. ո'չ պարապ տեղը յոյսեր տածենք, ո'չ ալ անհիմն ենթադրութիւններով յուսահատինք եւ ձեռնթափ ըլլանք: Որքան կրկնենք քիչ է թէ, իրականութիւնը լաւ ճանչնալով, եւ անոր համեմատ առանց կրքի, առանց շրջադուրի, առանց խռովելու գործելով է որ աղաքանիս պիտի շինենք:



# ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Դ

## Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Վ Ի Ճ Ա Կ Ը

Քրքրեցէք Պարսկաստանէն, մասնաւորապէս Ատրպա- տականէն, հայ մամուլին հասած թղթակցութիւնները, եւ ահա ձեր ականջներուն սրտաշարժ աղաղակ մը կը հեծե- ծէ, « Հաց չկայ, հաց չկայ »: Սովը իր ճիւղերէն սա- րածած է այս երկրին վրայ: Անօթի է Հայը, անօթի է Պարսիկը, հաց չունի ամբողջ ազգաբնակութիւնը:

Պարսկաստան գրեթէ միշտ ոգորած է այս ահաւոր թշնամիին ճանկերուն մէջ: Թշուառութիւն, եւ անոր հե- տեանքով ցոյցեր եւ խռովութիւններ պակաս չեն եղած այս երկրէն: Անցեալ ամառ Թաւրիզի թիւրք հասարակու- թիւնը այնչափ նեղ ճգնաժամի մը մէջ ինկաւ որ խորտա- կելով վարերով արմատացած գաղափարը թէ հոգեւորա- կանը մարմնացած սրբութիւն է, անոր վրայ պէտք չէ ձեռք բարձրացնել, յարձակեցաւ Թաւրիզի հարուստ կալուա- ծատէր Նիզամ-իւլ-իւլէմայի (կրօնապետ) տան վրայ, ցո- բնի ամբարները ցրուեց, սէիւններ սպաննեց, տունը կրա- կի տուաւ. և Նիզամ-իւլ-իւլէման, որ շահին կառավարու- թիւնը անգամ ճանչնալ չէր զիջաներ, ժողովրդական այս հոսանքին առջեւ խորտակուած, հազիւ կրցաւ իր կեանքը ազատելով գաղանի Թէհրան ապաստանիլ: Խռովութեանց մէջ 12էն աւելի սպանութիւններ եղան եւ կառավարական սարքազներու (զինուոր) միջամտութիւնը հազիւ թէ կըր- ցաւ վերջ տալ ասոր: Այժմ Մարաղայի մէջ շուկան փակ- ուած է, խռովութիւններ կ'երեւին ամէն կողմ, նոյն վի- ճակը Թաւրիզի մէջ: Շուկայի մէջ հացի փուռերու առաջ խոնուած քաղցած հասարակութեան հացը իրար ձեռքէն խլելը, կոխները, վիրաւորանքները եւ սպանութիւնները սարսափելի տեսարան մը կը ներկայացնեն:

Ինչո՞ւ: —

Պարսկաստան չունի՞ մշակելի արտեր, ժողովրդին բա- ւականաչափ հող, կամ ժողովուրդը ծոյլ է եւ գանսնք ան- մշակ կը թողու: Եւ սակայն Պարսկաստանի հողը պա- րարտ է ու բարեբեր. ազգաբնակութեան թիւին հետ բազ- գատած, իւրաքանչիւր ընտանիք իրեն բաւականաչափ հո- ղէն մօտաւորապէս երեք-չորս անգամ աւելի հող ունի: Պարսկաստանի ժողովուրդը չափազանց աշխատասէր է եւ հողը ոչ մէկ ատեն անմշակ չէ մնացած: Ուրմիոյ լճին բարձունքներէն ակնարկ մը նետելով մեր շուրջը, Սա- մաստ իր գիւղերու շարքով իբր հրաշալի պարտէզ մը կը ներկայանայ, Ուրմին եւ կիւնէյստան, իրենց մշակուած արտերով եւ խաղողի այգիներով, սիրուն կանաչազարդ մարզի մը տպաւորութիւնը կը թողուն: Մրգեղէններ, հա- ցահատիկներ եւ բոյսեր նահապետական առատութիւն մը ցոյց կուտան, եւ եթէ գիւղացին այդ ամէնը իր ամբար-

ները լեցնէր, առատութեան ճանճրոյթ մը պիտի զգար անշուշտ:

Ինչո՞ւ ուրեմն աղքատ է. երկրին բերքերը չն'ն ար- տածուիր: Ընդհակառակը, Կովկասի եւ Ռուսաստանի հրապարակները Պարսկաստանի միրգերով եւ ընդդէմէն- ըրով (չամիչ, սաբզա, նուշ, պտուղ, բրինձ, բամբակ, եխ.) լցուած են միշտ: Պարսկաստան իր բերքերը կ'ուղարկէ եւ վլան (չատ անգամ ցորեն), կարին եւ Տրապիզոն: Անցած 98 տարին ալ մեծ քանակութեամբ բիրք զրկեց Զմիւռ- նիոյ հրապարակը որոնք Եւրոպա արտածուեցան:

Ուրեմն շու՞յլ է: Ատոր հակառակը պէտք է փնտռել Պարսկաստան. ժողովուրդը չափէն զուրս սակաւապէտ է, քիչով գոհ եւ մեծամասնութիւն մը կ'ծծի: Հողագործ մը- շակը, մինչեւ իրիկուն արեւն քրտինք թափող խեղճ մար- զը կտոր մը ցամաք հացով կը բաւականանայ, արհես- տաւորը նոյն վիճակը ունի, վաճառական դասն ալ առա- ւելութիւն մը չի ներկայացնիր. կատարեալ զարմանք մը կը պատճառէ ականատեսի մը երբ Թաւրիզի շուկան ման գալով կը տեսնայ խանութներու մէջ ցամաք հացի եւ փոքր կտոր մը պանիրի շուրջը հաւաքուած վեց-եօթը մար- զիկ: Պարսիկը երբեմն երբեմն միայն փիլաւի խորտիկներ ւափով լափելու հաճոյքն ունի: Ուրիշ բան թէ խան ու աղա դասակարգը զեղիս, շու՞յլ ու որկրամու է: Հազուադէպ ալ պարզ է, եւ ճաշակաւոր ու մաքուր հագուելի չկայ:

Ինչո՞ւ ուրեմն:

Պատասխանը կարճ ու համոզիչ է: Հողը հողագոր- ծինը չէ — ահա թէ հարցը ո՛ւր է: Ամբողջ զիւղեր, գա- ւառներ, նահանգներ մէկ աղայի, մէկ խանի սեփականու- թիւն են: Միջնադարեան աւատականութեան կատար- եալ տիպար մը: Հողագործը կը գործէ, կը մշակէ հողը, իսկ իր ճակտի քրտինքով վաստակած պտուղը հարուստ կալուածատիրոջ ամբարը կը լեցուի:

Աւատառուն կը զիգէ ցորենը, ամբարներու մէջ կը փտտեցնէ, անպին արուեստական սովով մը ժողովուրդ մը տառապեցնելով: Աշխատաւորը դանն ու արցունքոտ աշ- քով կը նայի դէպի այն ամբարը, որ իր վաստկածն է, բայց իր սեփականութիւնը չէ: Մինչեւ իրիկուն չարաչար կ'աշխատի, երեկոյին՝ իր լացող զակներուն ձեռքը հաց չունի տալու:

Գարնան ականատես ըլլալու է Արագոի ափին թէ ի՞նչ մեծ բազմութեամբ պարսիկ գիւղացիներ պարկ մը շալկած Կովկաս կ'անցնին, հոն չարաչար մշակութեամբ քանի մը շահիներ շահելու եւ գնելու իրենց ընտանիքին համար չոր հաց:

Պարսիկ գիւղացիին վիճակը, գետնափոր որջը զուրկ ու եւ փալասի կտորէ, մերկութիւնը, աղքատութիւնը սաստիկ արգահատանք կ'արթնցնեն ականատեսին սրտին մէջ: Եւ այդ խեղճը ծոյլ չէ:

Պարսիկ գիւղացիին հետ նոյն վիճակն ունի եւ հայ շինականը, որուն այս ցաւին կը միանան ուրիշ ցաւեր ալ: Առաւելութիւն մը ունին միայն այն գիւղերը որոնք ուղղակի կառավարութեան կը պատկանին, եւ որոշ տա-

սանորդ մը վճարելէ յետոյ, քիչ կը տուծեն:

Այս զեղծման ընդհանուր շաւղին մէջ բացառութիւն մը կը կազմեն այն զիւղերը որոնք ուղղակի զիւղացիին սեփականութիւնը կը կազմեն եւ միանգամ ընդմիշտ զընուած են կառավարութենէն: Սալմաստի Ղալասար զիւղը առաջին օրինակը առաւ գնելով կառավարութենէն իր հոգիերը: Հալթուան, Սալմաստի ամենամեծ հայաբնակ զիւղը, 93ին իր կալուածատէր Թարիզի Ղալա-Պէկի ձեռքէն հազիւ կըրցաւ ճողոպրիլ: Ղալա-պէկ կառավարութենէն նոր գնած էր այդ զիւղը. Հալթուանցիները՝ Սալմաստի, Խոյի եւ Ուրմիոյ թեմական տեսուչ հանգուցեալ Մկրտիչ Աւետիսեանի առաջնորդութեամբ, որ, որպէս ամերկեան քաղաքացի, կը վայելէր անդիտական հիւպատոսարանի պաշտպանութիւնը —, յաջողեցան թէ՛ խանը թէ՛ իր Ֆարրաշները ձեռնելով զուրս վճարել իրենց զիւղէն եւ գտնուանալով անոր գէմ յաջողեցան ամբողջ զիւղին հողերը խոշոր գումարով մը գնել կառավարութենէն, եւ այժմ իրենք են սեփականատէր: Սալմաստի զիւղը, որ ամէնէն բերրի հողերը ունի, կալուածատիրոջ կեղեքման չկրնալով գիմանալ, իր ամբողջ տղամարդիկը պանդխտութեան մէջ կը մաշին, չկրնալով վայելել իրենց կալուածներուն արդիւնքը: Այժմ այս զիւղացիներն ալ հետեւելով Հալթուանցիներուն օրինակին զատ բացած են իրենց զիւղատէր Մաշատի-Թաղի գէմ եւ կ'աշխատին զիւղը գնելով իրենց սեփականացնել: Յոյս կայ որ Սալմաստիները պիտի յաջողին:

Իսկ մնացեալ զիւղերը թէ ի՞նչ կը քաշեն զիւղատէր խաներուն ձեռքը, հաս առաջ կը բերենք, Ատրպատականի առաջնորդարանին անցեալ տարի պատրաստած պաշտօնական տեղեկագրէն քաղելով, օրինակ մը՝ պատար մը կազմելու համար թէ ի՞նչքան ծանր հարկերու տակ ճզմուած է զիւղացին: Ուրմիոյ հայաշատ մեծ զիւղերէն մէկն է Կարտապատ, որ հարկ կը վճարէ իր աղային, որ կին մըն է այժմ՝

- 1. Գլխահարկ § 1 2 դրան (1)
- 2. Իւրաքանչիւր զուլու 3 մշակ, կամ 3 »
- 3. Տան հարկ 8 »
- 4. Իւրաքանչիւր տուն երկու հաւ.
- 5. Գոմէշն 3 դրան 4 շահի
- 6. Կովն 1 » 1 2 »
- 7. Մատակ էշ 1 » 1 2 »
- 8. Մատակ ձի 3 » 4 »
- 9. Առու հանելու համար ամէն զուլու երկու մշակ:
- 10. Աղային բրինձը ցանելու համար ամէն զուլու 2 մշակ:
- 11. Նալբուզին իւրաքանչիւր տունէն 15 շահի
- 12. Հարսնիքին 2 զուլու շաքար փեսայէն, երկու զուլու շաքար հարսէն:
- 13. Սերմեցուի կէսը աղայէն կէսը զիւղացիէն, ամէն աշ-

(1) Մէկ դրանը հաւասար է կէս ֆրանքի, իսկ Պարսկաստանի գործածութեամբ տեղական թաւրն է:

խատութիւն զիւղացիին վրայ. արդիւնքը կիսելէ առաջ աղան կը վերցնէ 17 1 2 ման (1):

- 14. Բամբակի ցանքի մէկ թանաֆին (2) 12 դրան
- 15. Աւոյտի » » 12 »
- 16. Այգիին » » 14 »
- 17. Ամէն մի այգիէն 2-6 ման կուտա (3):
- 18. Աղային ցանած բամբակի, պոստանի, բրինձի ամբողջ աշխատութիւնը զիւղացիին վրայ է. (այս աշխատութիւնները մարդ զուլու 75 թանաֆ կը հասնին):
- 19. Չմրան՝ հերթով կը մաքրեն աղայի բնակարանին ձիւնը: Եւլն. եւլն:

Տեղեկագիրը կ'աւելցնէ. «Բացի աղայական այս բոլոր արբերից սարփարստին տալիս են 2 դրան, իսկ բողոք, դատ պատահած ժամանակ կաշառք էլ անուում է ըստ կարգին:»

Այս սարկական վիճակը ունին բոլոր զիւղերն ալ: Սուլտուզ, Թրքախօս հայաբնակ գաւառը, սարսափելի կեղեքման եւ հարստահարութեանց ենթարկուած է: Ի՞նչ ընել: Ղալասար միլիոնատէր հարուստ ունէր իր մէջ, կըրցաւ աղատիլ, Հալթուան զիւղը գնելու չափ դրամ կըրցաւ գոյացնել, Սալմաստի պանդխտները բաւական բարուք վիճակ ունին: Ասոնք զիւրութիւններ ունէին, իսկ Սալմաստի միւս զիւղերը, մանաւանդ Ուրմիոյ եւ Սուլտուզի Հայերը կատարեալ աղքատութեան մը մասնուած անձոր են: Օգնութիւնը զուրսէն պիտի ըլլայ: Պաքսի կրեոսները թող գիտնան որ ոսկեհանքերը միայն նախահարկու մէջ չեն, Պարսկաստանի հողագործին մաճին սակին ալ ոսկիներ կան թաղուած: Բայց ինչէ՞ն գիտնանք թէ խեղճ զիւղացիները ատու, թիւրք աղայի ձեռքէն Հայ աղայի ձեռք անցնելով, բարուք վիճակ մը պիտի ունենան...

Պարսկաստանի վերջին հացի սղութիւնը կառավարութեան ուշադրութիւնը դարձուց ժողովրդին թշուառ զրուրութեան եւ այս հարցերուն վրայ: Անցեալ 98ի ամառը Թարիզի մէջ, Նահանգապետ Ամիր-Նիզամի նախագահութեամբ ընկերութիւն մը կազմուեցաւ աղքատներուն օգնելու համար եւ բաւական խոշոր գումար մը հանգանակուեցաւ, մասնակցութեամբ հայ վաճառականներու ալ. կառավարութիւնը բանի մը ամբարտաւերներ պարտաւորեցուց իրենց պահած ցորենը հրապարակի վրայ հանել: Այս ամէնը մեր քիչ առաջ պատմած Նիզամ-իւլ-իւլէմայի գէմ եղած ցոյցի արդիւնքն էր. այդ գէպը թերեւս Պարսից պատմութեան մէջ նոր էջեր բանայ:

Վերջին լուր մը: Թարիզի Պէկար-պէկին Մահթա-մատ-Նիզամը, որ հազարէն աւելի զիւղերու տէր է, ինքը՝ որպէս պաշտօնատար մը՝ փոխանակ սղութեան այս ճրգ-

- (1) Մէկ մանը հաւասար է 10-12 փաունտի:
- (2) Մէկ քանաֆը հաւասար է 64 քառ. արշընի:
- (3) Տհաս խաղող՝ սպի-կոշու հիւթը պատրաստելու համար:

նաժամին իր ամբարները բանալու ժողովրդին առաջ, ընդհակառակն իր ցորենը դիզած կը փտեցնէ: Ժողովրդին բողոքը այս վաշխառու պաշտօնատարին դէմ Թէհրան կը հասնի: Պէկլար-պէկին պաշտօնանկ ըլլալով մայրաքաղաք կը կանչուի դատուելու եւ հաշիւ տալու: Ինք իր վիճակին ծանրութիւնը հասկնալով, Պարսկաստանի արքայ պետին կը դիմէ, չհասկնաք Շահին, այլ կաշառքին, եւ 30,000 թուման (150,000 ֆր.) տալով թագաժառանգէն անցագիր կը ստանայ գաղանի արտասահման փախչելու: Ամիր-Նիզամ անոր հեռանալը լսելուն պէս Թէհրան կը դիմէ եւ զանի ձերբակալելու իրաւունք կը ստանայ: Պէկլար-պէկին Մարանդի մէջ կը ձերբակալուի եւ շղթայակապ թաւրիչ կը բերուի, իսկ Ամիր-Նիզամ՝ անոր որդին 40000 թումանի (200,000 ֆրանք) եւ 80,000 խալվար ցորեն տուգանքի կ'ենթարկէ:

Աս ալ դաս մըն է պարսիկ կառավարութեան համար: Այլ ժամանակ է որ կառավարութիւնը իր ժողովրդին թըշուառութեան կարեկից ըլլալով, կեղեքիչ խանութիւններէն ազատէ զանի: Ինչպէս մեր առաջին յօդուածին մէջ գրեցինք (Նոր կեանք թիւ 22-98) Սալմաստի վերջին խառնակութեանց ժամանակ Հայը իր հարուածները կրեց ոչ այնչափ կառավարութեանէն, այլ այսպիսի կեղեքիչ խառնակութեանէն:

Պարսկաստանի տնտեսական վիճակին մասին մենք առինք մասնաւորապէս Ատրպատականը եւ փոքրիկ սառուրոգիծ մը միայն ստիւնք, աւելի մանրամասն վիճակագրական տեղեկութիւնները Պարսկահայերուն թողալով: Սակայն, կրնանք վստահաբար ըսել, հողային հարցը նոյն վիճակն ունի Պարսկաստանի մէն մի անկիւնը. միայն Ատրպատականի վերջին սղութիւնը աւելի ուշադրութիւն կը դրաւ եւ, մասնաւորապէս Հայոց համար, բացառիկ շահեկանութիւն կը ներշնչէ:

Վ. ՇԱՀԷՆԻ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐՅՈՒՇՈՒՄՆԵՐ

ՊԻՇԵՐԱՊԱՀԸ

Ի՞նչ եղան պէքձիւները: Լուս ու սգաւոր զիշերներ, երբ քունը չի մօտենար աչքերու, վերյուշումի ու թեղարանքի զիշերներ, երբ ուղեղը, խոնջկնքին զերպղղութեանը մէջ, կը յամառի ցաւագին ոգուձներու ետեւէն, անոնց մտածած եմ յաճախ, եղբայրօրէն, այդ զիշերուան ու հսկումի մարդերուն: Ու անոնց ճոկանին ձայները, ողբական ու չարաշուք ձայներ, տրտմօրէն, տարակայօրէն, կ'արթնան իմ յոգնած ուղեղիս մէջ... տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ...

Ի՞նչ եղան անոնք: Դուրսը, անստոյգ ու կեղակարծ Վտանգին առջեւ իրենց յաղթ ներկայութեան մտածումը՝ ապահովութեան եսական ու հեշտալի զգացումով մը լեցուց մեր անձնգիր բաղքենիի զիշերները. ու չխորհեցանք որ այդ եղիկի կտրիճները եղբրական ցորեկներու արհաւիրքին ու ստոյգ ու անխուսափելի Վտանգին ձգած էին իրենցները:



Գիշերապահը մեր Պոլսեցի աղաքներու երեւակայութեանը մէջ խորհրդակիր մարդ մըն էր: Յօրեկին չէինք մտածեր իրեն, ու զինքը տեսնալը ահհեթեթ ու նեղացուցիչ բան մը ունէր, որովհետեւ բացարձակապէս զիշերուան մարդն էր անիկա, մութին մէջ յաճող էակը, մութով պատմուճանուած, խորհրդանշանուած, որ տաժանելի սաւայատակներուն վրայ կը քաշկրտէր իր մթամած կեանքը: Փողոցի դարձքէ մը յանկարծ խաւարին մէջ կը ստուերագծուէր, մօտը կը ցցուէր պէքձիւն ուրուականը, թաղիքէ զգեստներով, ու, եթէ ձմեռ էր, մարթապատ ծանր կոճուկովը:

Ատեն առեն, այգպէս դադրեցնելով ճոկանին կուռ ու խորունկ հարուածները, անձայն ու չափուած քայլերով կը սահէր, կը շրջէր իր պահպանութեանը յանձնուած մէկ բանի փողօցները, շարափորձները իրենց սպորանքներուն մէջ յանկարծակիի բերելու արտօրանքով մը: Ու պատահած ալ է իրեն, մէկէ աւելի անգամներ, կտրծք կտրծքի կտուիլ անոնց հետ: Առտուն դացած պատմած էր ասիկա հաւատարմաբար ոտականներու պահականոցը, ուր տաճիկ պաշտօնեայի սիրալի շնականութեամբ մը ճամբու գրած էին զինքը, թերեհաւատ ու նախատական:

Մեր թաղին մէջ դրեթէ ամբողջ Հայեր էին պէքձիւները, գաւառացիներ միշտ, Էրզրումի, Մուշի կամ Բաղէշի զիւղերէն, ընտանիքի տեր մարդիկ՝ որոնք իրենց զիշերուան քունին, հանդիսին ու երբեմն կեանքին ալ գնով յանձն կ'առնէին մինչեւ առտու անցնիլ պահալ մեր պատուհաններուն տակ, երբ մենք կը քնանայինք: Առով հանդիւրձ պէքձիւնութիւնը կը փնտուէր հայ բռնակիրներուն մէջ. միեւնոյն ընտանիքին անպաձները յաճախ իրարու կը փոխանցէին պաշտօնը թաղին մէջ. մէկը սիլա կ'երթար, ու եղբայրը կը յաջորդէր իրեն, թաղեցիներուն կասկածոտ ստորագրութեանը հետ՝ ոտականութեան շահախնդիր վաւերացումը ստանալէ ետքը:

Իր ճոկանը աղաքներուն համար տարօրինակ թովչութիւն մը ունէր: Ու երբեմն, երբ զիշերները փողոցը կը հանդիպէին պէքձիւն արարարին, անիկա կը հաճէր՝ հսկայի բարեացակամութեամբ մը՝ վայրիւնան մը իր մահակը փոխ տալ պղտիկին, որ երկու ձեռքովը հազիւ գեանէն վերցընելով զայն՝ սալաքարին վրայ կը ձգէր վախկոտ ու կը հնչեցնէր մեղմօրէն, պէքձիւն նման հատիկ հատիկ զիշերուան ժամը զարնել փորձելով: Հիւանդները ու թեթեւ քունով կիւնները՝ իրենց մրափին մէջ անոր լախախն արձա-

գանգէն կը համրէին տքնութեան երկար ժամերը:

Իր խցիկը, կաշիպէն, փողոցին անկիւնն էր. հազիւ իր հասակին երկայնութիւնը ունէր ան, ու երկու տախտակի վրայ հաստատուած անկողինը՝ ամբողջ կահ կարասին էր անոր: Տղաքները, դուրսէն, անոր ճեղքուածքներէն խուզարկու ախարկներ կը սպրդեցնէին յաճախ՝ խորհրդաւոր մարդուն ներքին զոգտուկ կեանքը գիտնալու անգիտակից ու տիրական հետաքրքրութեամբ մը:

Կէս դիշերէն ետքը պարտաւոր էր անիկա հրդեհները պոռալու: Անմիջապէս որ թնդանթի եօթը հաբուածները լսէր՝ կ'ըլլէր պահականոցին առջեւ կ'երթար սպասել, ուր 5-10 վայրկեանէն վազելով հեւալով կուգար՝ տէգ մը եւ լապտեր մը ձեռքը՝ կարմիր լոզիկ հագած սուրհանդակը, ազլաքի մունետիկ, որ երկու կարգի վրայ շարուած պէքձիներուն կը նետէր:

— Սթամպուլտա՛, Տիրէքէր Արասընտա՛:

Ու պահ մը վերջը, մութ ու անձայն թաղին մէջ, ամէն կողմէ կը սկսի գիշերապահներուն կոչը, թաւ, դժընդակ, հաստախարիօս:

— Եանկո՛ն վա՛ր... Էթա՛մբուլտա՛... տի՛...: րնտա՛...:

Ու գիշերը կը լեցուի, կը բեռնաւորուի, կը հեւայ բուր այս խուլ ձայներուն խուժումէն որոնք սեւ հորիզոններուն չորս ծագերէն կը խոյանան, իրարու բաղիւնով, իրարու մէջ ընդելուզուելով. ու ա՛լ այս ամէնը սաւառնաթեւ Աղաղակ մը կ'ըլլայ, համայնատարած, համայնապարիսպ:

Պատուհանները կը բացուին իրարու ետեւէ, ու Անձկութիւնը իր գալիացած գէմքը անկից դուրս կ'երկնցնէ խաւարին մէջ: Գիշերազգեստով էրիկ-մարդիկ գոններուն առջեւ կ'ըլլեն «կրակը լոբու» համար, ու հերարձակ կիւններ, շունչերնին բռնած, կը սարսուան մօտեցող սպանալիքին գողովը:

Հեռագհեա՛ կը շեշտուին, կը հասնին կուգան ձայները, միշտ տարտամ, միշտ հեռու սակայն, միշտ անընտել. ու թաղեցիները ի գուր կ'սգորին ստուգելու հրդեհին ճիշդ վայրը: Հորիզոնին մէկ արձագանգը «Գանտիլլի» կը ձայնէ իրենց, մինչդեռ հանդիպակաց կողմը «Գաարքէօյ» կը թնդայ: Պատուհանէ պատուհան, դոնէ դուր հարցումներ կ'ուղղուին հասկնալու այդ չմատնուելու յամառող առեղծուածը, մինչեւ որ ճարահատ, թաղէն մէկը պահականոց կ'երթայ՝ գալու անգործելու համար իրեններուն ու զրացիներուն վախը իրենց գործատեղիներուն, կալուածներուն ու՝ երկրորդաբար՝ ազգականներու եւ բարեկամներու ապահովութեանը մասին:

Դոներն ու պատուհանները գոցուեցան. գիշերապահներուն ձայները կամաց կամաց, իրարու ետեւէ, ինկան մարեցան: Ու պահ մը առաջուան խելայեղ աղաղակին յաջորդող միահեծան ու ընկճող լուսութեան խորերէն յանկարծ հեռաւոր, լալկան ու երկարաձիգ ոտնու՛մ մը կ'ուլուկէ անվախձանօրէն: Ուրիշ շունի մը կաղկանձիւնը կուգայ եղբայրօրէն միանալ անոր, ու ուրիշ մը, ուրիշ մը, ու

ըիշ մըն ալ՝ հապշտապ՝ իրենց մորմուքը կը բերեն խառնել հեռագհեա՛ լայնցնող ու սփռուող սղբուկոճիկն: Ու հիմակ անհամար խորշերէ վազնիվազ հասնող ու մայրական խաւարին մէջ խտացող վայելաններու վիթխարի ու յոգնատըխուր լալերդ մըն է որ կը բարձրանայ, կը ծաւալի, կը յնարանայ, իրարու մէջ ազուցուած դադարներով ու վերլսկուճներով: Չարաշուք ու այսահար Չայն մըն է ա՛լ, որ մահացու կեանքով մը կ'ուռնանայ, կը բազմապատկուի, կը բռնակալէ աղջամուղջը, լուռ ու մահաշուք Դուրսը: Դիւսիմ՝ պատերուն երկայնքը կը վազէ, տունները կը պարուրէ, պատուհաններուն կը զարնուի, կը բողբոջէ ու կը պաղատի, կը տրտնջայ ու կը հայցէ, կը դժգոհի ու կ'աղերսէ, տարտամ խոսիլքներ արթնցնելով քով քովի անբանացած քաղցրնիկներու կոյր ու դատապարտուած հոգիներուն մէջ:

\* \* \*

Գիշերապահը տեսակ մը նախնական ու սրտաշարժ պլորտուժիւն ունէր աղէկ հագուելու: Նախշուն ու խայտարղէտ արախճիկն շուրջը՝ ծաղկենկար եազման պինդ փաթթուած էր անթերի ոլորքներով: Հաստ չուխայէ միւրաբանը ուժով մը կը գրկէր իր լանյշի իրանը, ու գուրգուրացող ձեռքեր՝ հեռուն, Երկիրը՝ անոր կանակին վրայ հիւսած էին մետաքսէ ծաղիկներ ու տերեւներ: Նեղ կուկիկ շալվարը կը շեշտէր իր ըմբիշի մկանուտ սրունքներուն կտրովը:

Յորեկին ինքն ալ բեռնակիր էր նաւամատուցը: Իր պահպանութեանը յանձնուած մէկ բանի փողոցներուն տուններէն իր ամսականները հաւաքելու կ'ըլլէր ամէն ամսու զլխու կիրակին. մինչեւ 20 դրուշ տուող «տուներ ունէր». 40 փարանոցներն ալ կային: Մէճիտիէ տուողը, իրաւունքի անագորոյն գիտակցութեամբ մը, կը յանձնարարէր:

— Պէքձի ախպար, աղէկ նայի՛ս մեր տունը:

— Գուն հանգիստ քնացիր, աղա, մինչեւ լուս ձիեր քէօշէին բիբրանն եմ:

Եւ իրօք այն սեմին վրայ կը նստէր, երբ հանդուլու պէտք զդար:

\* \* \*

Պէքձին անզուսպ հայրենասէր մը պարձած էր վերջի տարիները: Սպանալիքով ճոկանը կը շարժէր թուրքի գլուխներ ջախջախելու ամուլ մուլգնութեամբ մը, անոնցմէ որոնք զիւրը կոխած ու թալանի տուած էին, ինչպէս ամէն անգամ նամակներնուն մէջ կը գրէին Անկից:

Այդ զգացումը աստիճանաբար սաստկացաւ իր մէջ՝ համեմատօրէն սաստկացումին աղէտքներուն, որոնց ազդեխարշ դուժբերը չուշացան բնաւ գալ թունաւորել իր պանդուխտի թախծալի ու դժնէ էութիւնը: Իր յոյսերը, իր երազները, «խայոց թագավորին» — ախ խուրբան ըլլիմ — ամսէ ամիս, օրէ օր տենդոս սպասումները մէկիկ մէկիկ

մարեցան: Ու այս քայքայուող յուսախաբութիւնը ա՛լ չձգեց զինքը. ա՛լ ուրիշ բան չկրցաւ խորհիլ. ասիկա հասնուած եղաւ իր հսկումի գիշերներուն, սեւեռեալ մը տաճուած որ վրդովեց իր ցորեկուան յոգնալուստակ բունն իսկ:

Ու գիշերապահը աւելի մնայլ, աւելի առեղծուածային մարդ մը եղաւ այդ վարանման ու մնալիւմի օրերուն: Անդիմազրելի, անխուսափելի յեղաշրջում մը կատարուած էր իր կարծր ու ազնիւ հողիին մէջ: Ըմբոստացումն էր որ հիմակ կ'արթննար հոն խուլ, տիրական, անյեղլի: Ու սկսաւ քիչ քիչ թուլնալ իր գիշերական պարտականութիւններուն կատարմանը մէջ դրած եռանդը. ա՛լ փողոցէ փողոց չէր արտորար, հետապնդելու մութին մէջ սողացող, մութին մէջ ճգնող, մութին մէջ զարանակալ էակներուն: Դանդաղ ու անզոյշ քայլերով կ'երթար ան, իր պարզ ու բռնական մտածումէն տարուած: Քառուղիներու բերանը կանգ կ'անէր ու կը յամենար, մոռնալով համբել ժամերը իր ճոկանի հարուածներովը: Ա՛լ կրցածին չափ խուսափեցաւ պահականոցին առջեւէն անցնել, ու երբ հրդեհները կը պոռար՝ իր ձայնը վայրագ ու տրտում բան մը ունէր, կողկողազին երկարումներ ուր իր երկրին, իր գեղին հրկիզումն էր կարծես զոր կ'աղաղակէր:

Կէս գիշերէն վերջը, շատ անգամներ, անգիտակցօրէն կը շտապէր իր քայլերը, ու զուրս ելլելով իր հսկողութեան սահմանէն, դրացի թաղին փողոցներուն մէջ կը սլքտար սենդայոյզ, հանդիպելու իր եղբայրակիցներէն մէկուն ու անոր հետ բաժնելու համար իր մտատանջութիւնները: Ճոկանը ամուր մը բռնած անութիւն մէջ, պատերուն տակէն կը սպրդէր կասկածոտ քալուածքով մը, գիշերաշրջիկ ոստիկան-զինուորներու չհանդիպելու զգուշացումովեմ մը, ու կը զիմէր դէպի իր ընկերով լախտին դռնդինը որ կը թնդար անդին. ու երկու կարիճները մութ անկիւն մը կը քաշուէին:

—Ի՞նչ խաբար, Մըրտօ:  
—Գէ՛շ, ախպէր ճա՛ն, գէ՛շ...

Ու Մըրտօն իրեն կը պատմէր կսկծոտ շեշտերով իր ընդունած վերջին նամակին գաճուութիւնը: Բաժնուած առեւնը, գողի պէս շորս զին նայելէ յետոյ, Մըրտօն անոր ափին մէջ կը սահեցնէր ճարթկած գունաթափ թերթ մը զոր իր կոճուկին անդունդներէն հանած էր:

Ու ճոկանի հարուածները կատրած թափով մը կը վերսկսէին երկու դրացի թաղերուն մէջ, պաղչկեցնելով երկու մեղսակից ու ցաւակից սրտերուն հրայրքը:

Կը պատահէր իսկ որ երեք-չորս ընկեր կը միանային գիշերուան ուշ, ուշ ժամերուն, ու թափուր գետնի մը փրլատակներուն վրայ կ'ծկտած քով քովի՝ կը ծխէին ու կը խօսէին ցած ձայնով ու լայն հուժկու շարժումներով: Վըրէժի ու սպանութեան խօսքեր կը փսփոային իրարու, ու ասոնց մէջտեղէն, ու ասոնց ետեւէն, կսկիծի մեղմ հառաչանք մը կ'իլլէր կարշնեղ կուրծքէ մը: Ու այդ դժման դաւաղիւնները տղու սրտաշարժ արցունքներ ունէին մերթ իրենց բիբերուն վրայ:

\* \*

Խեղճ բարի մարդիկ, ի՞նչ եղան արդեօք:

Ըսին թէ անոնցմէ շատերը խեղզուեր անյայտացեր էին Փոթորիկն մէջ, ու ուշիշներ քլուեր տարուեր հեռուները, արիւնոտ ու անստոյշ հեռուները: Ըսին թէ գաղան դէմքով ու գէ՛շ ձայներով Տաճիկներ յաջորդեր էին անոնց, աւելցնելով Պոլիսի գիշերներուն անասելի, տարապայման պակուցումը:

Ու տրտումեմամբ, ու վախով կը մտածեմ՝ յաճախ այդ ցաւալին եղբայրներուն որ իրենց գիշերուան բունին, հանգիստին ու կեանքին ալ գնով՝ մինչեւ առտու կ'անցնէին կը գաճային մեր պատահաններուն տակէն, երբ մենք կը քնանայինք:

Ու անձկութիւնով կը հարցնեմ ինքնիրենս.  
Ի՞նչ եղան, ի՞նչ եղան պիքձինքը:

ԱՐՄԷՆ ԶԱՐՊԱՐԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱՌԻԹԵԱՆ ԷՋԵՐ

ՀՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

Թ

Ընդլիչուում. — Արմուտաններու վիճակը. — Ժողովրդիկ տառապանքները. — Նանատակ Ղարա Մկրր. — Արժանաշար վարձատրոչքիչն:

Պէլլերեան ու Պատուելին բաւական քնանալէ վերջ արթնցան որ լուսնալու մօտ էր: Չորին մէջէն ճամբայ ինկան ու գացին: Ու մենք ա՛լ իրենց ետեւէն չենք երթար: Եկէին Պաղտասար որ ուշ մնացած էր եկաւ միացաւ ընկերներուն: Եկեղեաց գաւառը, հայ սրբաւայրերու շուքին տակ հանգստացուցին խոնջ ու յոգնած մարմիննին: Յիշատակարանին այդ դրուագները շատ պիտի յուզեն հայ սրտերը, բայց հարկ է այժմ լուսնեմաք անցնիլ այդ ամէնուն վրայէն, ամբողջին հրատարակութեանը համար սպասելով լաւագոյն ժամանակներու: Վերադառնանք Արմուտանները ուր հայ ժողովուրդը կը շարշարուէր իր հալածական գաւակներուն համար:

\* \* \*

Թիւրք զօրքը խաչի դար բլուրը վրանահար կը հսկէր Արմուտանցիներու երթեւեկութեանը, շարունակելով խժըրժութիւնը: Հայ լրտեսներն ալ իրենց աշակցութիւնը կը շոյալէին երկրին աւերիչներուն: Հաճի Գէորդ եւ հաճի կարապետ ամէն ջանք ի դորձ կը դնէին փախստականները գտնելու: Մեծ-Արմուտան քանի մը թիւրքեր իրենց օգնական էին, ու զոնէ շաբաթը անգամ մը լեռները խուզարկել կուտային: Ասոնք սուտեր կը շինէին թէ փախըս-

տականները տեսնուեր են այս ինչ տեղը. զօրքը կ'երթար  
կը պաշարէր մասնանիչ եղած վայրը ու ձեռնունայն ետ  
կը դառնար:

Օրին մէկը գեղը կալի մը մէջ կեցած էին գեղին քա-  
հանան, հաճի կարապետ, եւ Պատուելիին ազգականնե-  
րէն մահտեսի Ղազար եւ ուրիշներ. զօրքը շարուեցաւ լեռ  
երթալու. Ղազար աղա քովը գտնուողներուն կ'ըսէ, «Թո՛ղ  
երթան. հիմա կը բռնեն կը բերեն, ինչպէս ուրիշ ատեն-  
ներ:» Աս հեղնութիւնը իրիկուան հարիւրապետին ական-  
ջը կ'իյնայ. թիւրք զօրականը Ղազար աղան կանչելով  
բազմութեան մէջ թուրը կը բաշէ եւ կը սպառնայ, «Վա՛յ,  
գուն այսպէս ծաղրեր ես կառավարութեան զօրքերը» Ը-  
սելով: Ներկայ եղողները թէեւ թող չեն ի տար որ վայ-  
րագ հարիւրապետը սուրը Հայուն գլխուն իջեցնէ, բայց  
աս խեղճը վախէն լեղապատառ անկողին կ'իյնայ կը մեռ-  
նի: Ղազարին խօսքերը հարիւրապետին հաղորդողը հա-  
ճի կարապետն է ըսուեցաւ:

Մահտեսի Սարգիս իր այգին կը պահպանէր, երբ քանի  
մը զօրք գողութեան կ'երթան. թուփերու տակէն խշրտոց  
մըն է կ'ելլէ. մարդը աղուէս կամ այլ անասուն կարծելով  
առանց գնտակի ատրճանակ մը կը պարպէ դէպի շերտոցը.  
եւ հաճա զօրքերը գուրս կ'ելլեն, կը բռնեն մարդը եւ գեղ  
կը բերեն, ամբաստանելով թէ «փախստականները կը  
պահէ եւ երբ մեղի տեսաւ անոնց ատրճանակով նշան Ը-  
րաւ եւ փախան:» Ինչէր քաշեց խեղճ մարդը: Բարձր  
փայտ մը անկեցին վրան երկճիւղ. գլուխը անցուցին  
ազդերուն մէջէն ու չուանով կախեցին եւ յանկարծ թող  
կուտային որ իյնար, «Ո՛ր են, տեղերնին ըսէ» գոչելով.  
մարդը իրօք ալ բան չէր դիտեր, ի՛նչ կրնար պատաս-  
խանել: Երեծուեցաւ, չարչարուեցաւ. անշնչացեալ վիճակի  
մէջ էր. լուր խրկեցին տուն, եւ եկան տարին:

Հաճի կարապետը կասկած ունէր թէ Ղարա Մկրը  
փախստականներուն տեղը գիտնալու է. իմաց տուաւ իշ-  
խանութեան. եկան բռնեցին խեղճը. տարին կապեցին  
սիւնի մը. անընդհատ կը ծեծէին, վրան ալ շուր լեցնելով,  
մինչեւ որ դժբաղը երիտասարդը ծեծի տակ հոգին աւան-  
դեց: Մարմինը փառաւոր հանդէսով թաղեցին. կարգա-  
պէր յանձնախումբին անգամներուն մէկն ալ... հաճի կա-  
րապետն էր, որ զազաղին վրան կուշտ մըն ալ լացաւ:

Պատուելին իր Յիշատակարանին առաջին դուխներուն  
մէջ հետեւեալ կերպով կը նկարագրէ այս մարտիրոսը.  
«Փոքր-Արմուտանի մէջ հովուութեամբ պարապող երի-  
տասարդ մը կար ՉԿ տարեկան, հասակով փոքր, սեւա-  
մորթ, որուն համար Ղարա Մկրը անունը առած էր: Աշ-  
քերը կրակի պէս կը փայլէին, եւ ձիւն նման վազելու  
յատկութիւն ունէր: Բան մը աչքին չէր երեւնար. «Ա՛զգս,  
ա՛զգս» կ'ըսէր կ'երթար: Եթէ մէկը ազգային երգ մը եր-  
գէր, ազգին վրայ խօսէր, հոգին անոր կուտար, մինչեւ  
որ իր հոգին ալ ազգին սիրուն տուաւ ու ազատեցաւ:»

Հաճի կարապետ անհիմն կասկածներով խուզարկել  
կուտար Պէյլերեաններու տունը. ու մինչ թիւրք զօրքերը  
կը շարչրկէին կիները, ինք իր տունը քաշուած թէֆ կը

զարնէր ու կը ցնծար: Խեղճ կիները պիտանալով որ միայն  
հաճի կարապետը կրնար միջամտել անոր կը դիմէին, եւ  
ատ ապերախտը իբր բարերար մը ներկայանալով կուզար  
առաջնք առնելու, ցաւելով, կարեկցելով: Ո՛ր մէկը պատ-  
մել. «Այս տեսակ շատ բաներ որոնք յեշելն իսկ ան-  
պատուարբեր է» կը գրէ յիշատակարանը:

Կառավարութիւնը մատնիչներէն իմացած էր թէ Նը-  
շան Եսիկեան վառօգ բերած էր. մթերանոցը սակայն ոչ  
ոք գիտէր. այս պատճառաւ ընդհանուր գատախազ Բէմ-  
զին Երեզայէն կրկին Արմուտան կանչուեցաւ քննութիւն  
բանալու: Երանօթ անձեր ձերբակալուեցան: Բէմզի ատ-  
եանը բացաւ ու քննութեան սկսեց. քաղցր խօսքերով շատ  
համոզեց, բայց երբ կը տեսնէր թէ կարելի չէր ըլլար ա-  
նուշուութեամբ բան մը հասկնալ, ձերբակալեալները կը  
խրկէր խաչի դարը, կառափման տեղին, ուր Համիտի զօր-  
քը անհամբեր կը սպասէր քրիստոնեայ հայը չարչարելու:

Կախաղանը միշտ պատրաստ էր. բայց փոխանակ Հայե-  
րուն վզէն չուանը անցընելով մէկանց անոնք խղզելու, կը  
չարչրկէին ինչպէս Սարգիսը, եւ վար կը ձգէին: Ասիկա  
բաւական չէր. երեսնին մեղը քսած ժամերով արեւը կը  
կը թողէին. աչքերնուն թարթիչներուն տակ շիւղեր դը-  
րած անընդհատ արեւը նայիլ կուտային, մինչեւ որ ո՛ր եւ է  
յայտնութիւն մը առնէին, սուտ կամ իրաւ: Տանջանք-  
ները կը տրուէին ցորեկ ատեն, ժողովրդին ներկայու-  
թեանը. ու յետոյ չարչարուածը երբ գունաթափ ու մա-  
համերձ վիճակի մէջ էր, երկու զինուոր թշուառներուն  
ուսը մտած Բէմզիին ահեղ ատեանը կ'առաջնորդէին:  
Հոնկէ կրկին կ'առաջնորդէին խաչի դարը: Այսպէս ահեղ  
տանջանքներու տակ մէկուն ըսել տուին թէ «փախստա-  
կանները Վարդան վարդապետը տարաւ:» Նշանը խոս-  
տովանեցաւ թէ վառօգները ինք կը բերէր եւ Ալեքսանին  
կը յանձնէր: Ալեքսանը մինչեւ վերջին շունչը շնոտովա-  
նեցաւ. մահամերձ մարմինը տուն խրկեցին. առողջանա-  
լէն վերջն ալ բանտ տարին:

Վառօգին և զէնքերուն տեղը մի միայն Ղարա Մկրը  
ու Ալեքսանը գիտէին: Առաջինը մեռած էր եւ վերջինը  
չէր խոստովաներ: Ղարա Մկրը սակայն թաղէոս անուն  
դրացի մըն ալ ունէր որուն վրայ վստահ էր. օր մը վա-  
ռօգին տեղը փոխելու համար անոր օգնութեանը կարօ-  
տելով, միասին տեղաւարած էին: Այլ սատանայի ձաղը  
նեղացնող ալ չի կար, բայց չյարգեց իր դրացիին ոսկոր-  
ները և հաւատարմութիւնը չարաչար գործածեց: Թաղէոս  
գնաց հաճի կարապետին ըսաւ: Որպէս զի մատնիչը ինքն  
ալ չվստանգուի, հաճի կարապետ հետեւեալ կերպով զըս-  
նել տուաւ մթերանոցը:

Գուշակող հօճա մը կանչեց. անոր յայտնեց վառօ-  
գին թաղուած արտը: Հօճան երկար աղօթքներ ընելէ  
վերջ գաշտ ելաւ, զօրքն ալ միասին առած: Գացին արա-  
մը ուր չորս կողմը խորհրդաւոր ակնարկ մը նետելէ վերջ  
հօճան հրամայեց քանի մը տեղ փորել: Ինքն ալ բրիչ մը  
առաւ ու Մուհամմէտին կարող զօրութեամբը, վառօգը  
գտան, եւ ուրիշ տեղ մըն ալ երեք հատ Մարթինի ու

փամփուշտներ. առին մեծ հանդէսով եւ բերին Քէմզիին, հազար անգամ փառաբանելով Մուհամմէտին անունը: Բայց այսքանով գոհ չեղան, եւ անպատճառ դեռ ուրիշ Մարթինիներ ալ կան ըսելով շատերը կը նեղէին. բայց դուշակիչին՝ աղօթքները ա՛լ չէին զօրեր. ուրիշ Թաղէսներ կը պակսէին:

Երկու Արմուտաններուն մէջ բոլոր սովորական հրացանները արդէն տեղական իշխանութիւնը ժողոված էր. աս անգամ մանրակրկիտ խուզարկութիւն մըն ալ Քէմզին բրաւ, եւ հատ մըն ալ չթողուց. ան մատնիչ հայ «ախպարիկներուն» զէնքերն ալ առաւ:

Քէմզի իր յաղթանակը տարած, զէնքերն ու վառօդը ձիերու վրայ բեռցած, ու նոր բանտարկեալներն ալ հետը առած Երիզա գնաց: Իսկ զօրքը դեռ հոն կը մնար. եւ ցուրտը երբ վրայ հասաւ զեղ բերին. մէկ մասը զպրօցը, մէկ մասն ալ տան մը մէջ տեղաւորեցին:

Բանտին մէջ շատեր կային: Ասոնց համար Պատուելին կը գրէ. «Մասամբ գոհ կրնային ըլլալ իրենց վիճակէն, վասն զի գաղափարի մը համար կանուխէն յանձն առած էին անկէց ալ աւելին՝ այսինքն կախուիլ ու մեռնիլ:»

Բայց մէկը կար որ չէր կրնար միխթարուիլ ու շատ անհանգիստ էր. այդ մարդը Ալեքսանեան հաճի Ճանիկն էր, հաճի կարապետին եւ թիւրքին բարեկամ մարդը, հարուստ եւ փարթամ մարդը: Իրեն շատ ծանր կուզար այս բանտարկութիւնը, վասն զի իր խելքովը իր սիրելի կառավարութեան հաւատարիմ եւ հաճի կարապետին հաճելի երեւնալու համար էր որ ծուղակն ինկած էր: Միշտ կը բողբէր, իր հաւատարմութիւնը յայտնող փաստեր առաջ բերելով: «Տեսէք, կ'ըսէր. իմ ըսած վառօդներս ու զէնքերս գտաք. իմ լուր տուած ատենս չգտնելուդ համար ես մեղաւոր եմ միթէ:» Բայց ի զուր. անսացող չկար: Օր մըն ալ աւելի մեծ քայլ մը առաւ. կ. Պոլիս նախարարներուն հեռագրեց թէ «ինք կառավարութեան մուխպիրութիւն ըրած է, ու տեղական իշխանութիւնը զինքն ալ խռովարարներուն հետ բանտարկած է:» Մեծ յոյսով հեռագրին պատասխանին կը սպառէր հաճի Ճանիկ. եւ ահա զինքը շղթայի զարնելու պատասխան հասաւ Պոլսէն: Մարդը յանկարծակիի եկաւ. ա՛լ չզիմացաւ. մէկ երկու օր վերջն ա՛լ ծանր էր վիճակը, տեսան թէ յոյս չի կայ, երկու տախտակի վրայ կապած խրկեցին սուն, ուր հասաւ թէ չէ մեռաւ:

Հաճի կարապետ իր սիրելին հողը գնելէ վերջ իր կեանքը ազատելու միակ ճարը փախուստի մէջ գտաւ, եւ մէկէն ի մէկ շունչը Պոլիս առաւ:

\* \* \*

Գիշեր էր. փոքր-բազառիճի դեղէն քանի մը վայրկեան վեր պարտէզի մը մէջ շինուած մարագին գուռը բանալու կ'աշխատէին երեք հոգի: Ասոնք շա՛տ յոգնած կ'երեւնային. հեռաւոր ճամբայէ եկողներ: Գուռը բացին մտան ու փակեցին: Գուռի չէին նմաներ, ու մարագն ալ գողնալիք բան չկրնար ըլլալ: Մէկ ժամէն լուսցաւ, ու դեռ ելլելու միտք չունէին: Պարտէզին ու մարագին տերը, որ կին մըն էր, զաւակները առած պարտէզ եկաւ, եւ տեսաւ թէ իր կաղամբները քաղած տարած էին: Չայն մըն է փրցուց, «Քալամներս տարին» աղաղակելով: Մարագին գուռը գնաց. ու բալլիքին ծակէն դիտած ատեն ահաբեկ դարձաւ «Գողե՛ր գտայ» պոռալով: Վաղեց դեղը ձայնելու: Այս պահուս մարագէն մէկը դուրս ցատքեց, կնիշը ետեւէն գնաց.

— Քոյրս, մենք ենք. մենք գող չենք. մենք մեզ գողցեր ու չենք կրնար պահել, քու քալամներդ ի՞նչ պիտի ընենք:

Կինը նախ շանսաց, բայց երբ կուշտ մը երեսը նայեցաւ թէ Ելկէն Պաղտասարն է, այն հին փախստականը որ տարի մը առաջ այն գեղերուն մէջ պահուած էր ու ամէնուն ծանօթ,

— Հապա ընկերներդ ո՞վքեր են, հարցուց:

— Անոնք ալ Հայեր են. քալամի գողեր չեն. եթէ կ'ուզես քու քալամներուդ գինը կուտանք քեզի, մեզ անհանգիստ մի՛ ընէր: Յոգնած ենք, խնայէ մեզի. ամբողջ գիշերը քալած ենք, հիմա պիտի հանգստանանք որ նորէն կարողութիւն ունենանք գիշերը քալելու:

Կինը ետ կեցաւ իր ընկիւղէն. բայց մինչև այդ ատեն անցորդները պատահածը տեսեր էին. ու երբ Ելկէն Պաղտասար ընկերներուն քովը դարձաւ, ա՛լ հոն մնալին անկարելի համարեցին, եւ երեքը միասին մարագէն քաշուեցան եւ լեռ մը գացին: Կինը եղածին վրայ շատ զղջաց. տունէն պաշար եւ ընկերուհի մըն ալ հետը առած լեռը ելաւ, փախստականները գտաւ, ներողութիւն խնդրեց, կարեկցեցաւ անոնց... ա՛լ իր քալամները մոռցաւ, եւ բերնովը ըսաւ.

— Ատ բանը ընողները զրացի թիւրքերն են որ, առանց աշխատելու, աշնան դէմ կուզան կը քաղեն մեր անկաճները եւ ջորիներու բեռցած կը տանին: Կարծեցի թէ ատ թիւրքերն են որ ուշը մնալով մարագը ապաստանած են: Ախ, մենք ե՛րբ պիտի ազատինք աս շուններուն ձեռքէն:

— Մօտ է, ըսին փախստականները:

Ու կինները ուրախացան եւ սկսան հարցուփորձ ընել:

— Չեր կողմերէն աս ի՞նչ բաներ է կը լսենք: Ի՞նչ վիճակի մէջ են հիմա ձեր գեղացիները: Մեղք, հազար մեղք. կ'ըսեն թէ մատնիչ Հայերու երեսէն է որ այս բաները կ'ըլլան: Վա՛ր անցնին անոնք. մեր մէջ ալ կան մատնիչներ: Հոյ միտիւր մը կայ, որի որ բարկանայ ըսպառնալիքներ կ'ընէ. եւ մէկ տղայ մըն ալ բռնել տուաւ, քովը գանուած ձեռագիր երջարանի մը համար: Անոր հօ-

ըր հետ ոիս ունէր, այսպէսով վրէժը լուծեց. 30 ոսկի ծախսելէ վերջ հազիւ ազատեցաւ:

Կիները շատ ստիպեցին փախստականները զիշերը տուն երթալ հանգստանալ, ցերեկ ժըն ալ մնալ ու ապա երթալ. բայց անոնք չընդունեցին այս հրաւերը: Կիներուն վերջին խօսքը եղաւ «Մեր մասնիչն ալ սպաննեցէք, ինչպէս ձեր կողմինները կ'ընէք: Սա որոմները գտնուել ցորենէն որ աճին:» փախստականները «լաւ կ'ըլլայ» ըսին, կիները ճամբու գրին, ու իրենք ալ մեկնեցան Հասան Օվա երթալու: Ալ հոն գնալիք տեղերնին զիտէին. եւ դեռ չլուսցած հասան:

Մեր հալածեալներն էին ասոնք, Պէյլերեան, Պատուելին, Եէկէն Պաղտասար, որոնք Արմուտան կը վերադառնային:

Հանգիստ ու ապահով կը մնային Եկեղեցաց գաւառը. ոչ ոք իրենց ուր ըլլալը զիտէր, և պիտի կրնային նահանգին սահմաններէն անվտանգ դուրս ելլել: Արմուտաններու հետ հազորդակցութիւն չունենալով հոն անցած դարձածէն անտեղեակ կը մնային: Բայց վերջի ատեններս Երեզայէն եկողները կը պատմէին թէ կառավարութիւնը Արմուտաններէն բեռ մը զէնք եւ երկու բեռ վառօղ բերած էր: Բէժգիրն առածներն էին, որ ժողովրդի բերնին մէջ կ'աճէր ու կը բազմանար: Լսելով այս ամէնը հրոսակները սարսափելի կերպով կը տառապէին, մանաւանդ երբ լսեցին թէ թիւրք զօրքերը տակաւին Արմուտան կը մնան: Չինքնանար. երթալով հոգեբնին շատցաւ, եւ կ'ուզէին վերադառնալ իրենց կողմերը ուրից այնքան ցժուարութեամբ դուրս ելած էին: Խօրհուրդ հարցուցին Վարդան վարդապետին որ յորդորեց տեղերնին հանգիստ մնալ, վասն զի կառավարութիւնը միշտ զիրենք կը փնտռէր: Ու վարդապետը պատմեց բոլոր անցած դարձածը, զործուած վայրագութիւնները, իմացուց չարչարուողներն ու մեռնողները, եւ հաճի Կարապետին Պոլիս երթալու պատրաստութիւնը: Երբ այս ամէնը լսեցին, ա'լ տեղերնին կրակ դարձաւ. չզիմացան, մանաւանդ որ կ'ուզէին հաճի Կարապետը սպաննել Պոլիս երթալէն առաջ: Խօսքը մտիկ չըրին, մնաք-բարոյն ըսին ու մեկնեցան: Եւ ահա վերըստին գտանք ատոնք Բագաոթի մարաղը, եւ հիմակ ալ Հասան Օվա են: Հոս աւելի մտնրամասն լուրեր առին, բայց հաճի Կարապետին արդէն Պոլիս փախած ըլլալու լուրը կատարեցուց զիրենք:

Մեկնելով Հասան Օվայէն գացին Արմուտան, ու շիտակ Պատուելին դուռը զարկին: Դիւրին է երեւակայել տնեցիներուն ապշութիւնը ի տես այդ փախստականներուն որոնք շատոնց գաւառին սահմաններէն հեռացած կը կարծուէին: Տնեցիները ուզեցին հաճի մայրերուն ալ լուր տալ որ գան մէյ ժըն ալ զաւակներնին տեսնեն. բայց զաւակները չհաճեցան: Պատուելին կիներ ու զօրքանչը արցունքով կը պատմէին բոլոր եղածները. իսկ աս վերադարձողները իրենց նորէն Արմուտան գալուն բուն պատճառը չյայտնեցին, վասն զի Պատուելին զօրքանչը հաճի Կարապետին քոյրն էր:

Գիշերը հոն մնալ չուզելէ՝ եւ մեկնեցան՝ մէկ ու կէս ժամ հեռուն դանուող իրենց այդիները, ուր ցորեկը այգեստանի մը մէջ անցուցին. միւս գիշերուան մէկ մասն ալ Ս. Գէորդայ մատուռը անցընելու համար ճանապարհ ինկան: Գուրտ էր. բարձր լեռներու վրայ սաստիկ կը ձիւնէր, իսկ ցած տեղուանքը կ'անձրեր: Ս. Գէորդի մատուռը շատ մտեցան. մէկ երկու օր այդ կողմերը անցուցին որպէս զի զօրքերը երբ երթան իրենք ալ դեղ գտնան, եւ քանի մը օրուան հանգիստէ ետքը նորէն մեկնին:

Մտնելով Մեծ-Արմուտան գտան իրենց գաղտնապահ մէկ ընկերը, որ ուրախութեամբ ընդունեց զիրենք. թէեւ շատ աղքատ էր բայց ինչ որ ունէր բերաւ հիւրերուն առջեւ դրաւ: Հինգ օրի չափ հոն մնացին, և Պէյլերեան աօգնեց: Բոլոր անեցիները գաղտնապահ էին. աղքատ ըլլալով, հիւր շատ չէին ունենար. եւ երբ զրացի մը դար, ապաստանեալները փոքրիկ մառանը կը մտնէին: Կազմակերպութեան ամէն գաղտնիքները երեւան եկած էին, բայց միայն աս մարդուն հազարգուածները ծածուկ կը մնային:

Մեծ Արմուտան էր Պատուելին մայրը. իր զակին փախելէն ի վեր օրերը լալով կ'անցընէր. հազար անգամ երանի կուտար բանտարկեալ երիտասարդներու մայրերուն որ ամէն շաբաթ նամակ կ'առնէին իրենց սիրելիներէն, մինչ ինքը բոլորովին զրկուած էր այդ մխիթարանքէն. ամիսներէ ի վեր լուր մը չունէր զակէն, որուն մահուան գրոյցը պարբերաբար հրապարակ կ'ելլէր: Փախստականները հիւրընկալող տանը կ'իյնէր չզիմանալով մօր մը այդ քաջածին պնդեց եւ արտօնութիւն ստացաւ որ հալող սաշող մայրը գայ անգամ մը զաւակը տեսնել: Պէյլերեանէն հրաման ելլելով, այդ կ'իյնէր եկեղեցի գնաց իրիկունը եւ գտնելով Քէշիշեանին մայրը գաղտնաբար կանչեց եւ ըսաւ որ «Երբ մուծ ըլլայ մէյ մը մեր տունը եկուր. տրուուց քովէն եկող կայ, նամակ ունի:» Խեղճ կ'իյնէր ա'լ ուրախութենէն ինքզինքը կորսնցուց: Որոշեալ ժամանակին գնաց նշանակուած տունը. դուռը կամաց կամաց կը զարնէր. բացին, ներս մտաւ, ու երբ տեսաւ որ զաւակը ընկերներուն հետ հոն է, ձիւն մը արձակեց և նուազեցաւ: Պատուելին կեցած տեղը մնաց. իսկ Պէյլերեան եւ Եէկէն Պաղտասար քաջալիբախտ խօսքեր ընելով սթափեցուցին զանի: «Փա՛նք քեզ Աստուած» ըսելով նախ համբուրեց երկուքին ձեռքները, ու ապա իր զաւակը պինդ մը զրկելով անընդհատ կը համբուրէր ու կը համբուրէր, «Ողջ էք, հա', ողջ առողջ» ըսելով: Միշտ երեռնին կը նայէր ու կը խօսէր, չէր կշտանար զրուցել և ոչ ալ բաժնուիլ կ'ուզէր:

— Ախ, կ'ըսէր, հիմա դուք մէջ տեղ չի կայք. ա'լ ամէն մարդ ձեզի գէշ կ'ըսէ, ձեզ սիրող ու պաշտող ընկերն իսկ. առաջ ձեր անունները տուած ատեննին մէկ մ'ալ կը թափէր բերաննուն, իսկ հիմա էշղիս եւ մարդասպան անունը կուտան ձեզի. ա'լ մար եղիր զիմացիր: (Խօսքը Պէյլերեանին և Պատուելին էր, վասն զի Եէկէն Պաղտասար)

սար տասնըջորս տարի անաջ արդէն մարդասպան տիտ-  
ղոսը առած էր)։ Դուք մըջիւնի բունին վրայ թնդող մար-  
դիկ չէիք, հիմա այս բաները որ կը լսեմ։ Շիտակը ըսէք  
Սիրորը դժուր սպաննեցիք։

— Ո՛չ։

— Էօմէ՞րը։

— Ոչ։

— Հա՛յ բեօրնայ աչքերնին, սեւ ըլլայ երեսնին. ի՞նչ  
սուրբն է որ կը քսեն ձեր վրայ։

— Հոգ մի՛ ընեք, մարիկ, ըսին. ամէնը կ'անցնի եւ  
օր մը իրենք կը խափնին։

— Ախ, ե՞րբ, ե՞րբ. ատ օրն ալ պիտի տեսնե՞նք  
արդեօք։

— Կը տեսնէք, կը տեսնէք, ըսին։

— Ա՛լ գնա, մարիկ, ըսաւ Պատուելին. հոս ենք. վաղն  
ալ կ'ընաս գալ, միւս օրն ալ։

Դիուար կուգար բաժնուիլ. բայց ստիպեալ գնաց,  
խօսք առնելով որ հետեւեալ օրը ճիշդ ժամանակին ամուս-  
նացած աղջիկն ալ հետը առած պիտի գար, «Վասն զի,  
կ'ըսէր, ան ալ սիշտ կուլայ ե շատ փափաք ունի եղբայրը  
տեսնելու։»

Պառաւր յուսալիր մեկնեցաւ. ու իրենք կէս ժամ  
վերջը ճանապարհ ինկան ու մեկնեցան։

Շատ վտանգներ յանձն առնելով, երկար ճանապար-  
հորդութեան մը նեղութիւնները քաշած էին ու իրենց գե-  
ղը վերագործած որպէս զի հաճի Կարապետը սպաննին.  
ան արդէն մեկնած էր, ու թիւրք զօրքն ալ զեռ չէր գա-  
ցած որպէս զի կարենային քանի մը օր հանգիստ ընել,  
Գլխիկոր սկսան ետ գառնալ։

Ճամբան հասած էին գեղ մը, եւ ցերեկը տան մը  
մէջ էին, երբ տան տէրը անապարանքով եկաւ ու ըսաւ  
թէ Արմուտանի զօրքերը հոն հասած են, ու վրան եւայլն  
ջորիներու վրայ բեռցած բերած են։ Պահ մը մտածեցին  
թէ մի՛ գուցէ փախստականներուն այդ կողմը եկած ըլ-  
լալը իմանալով առաջ քալած ըլլային։ Սակայն բեռնաւոր  
գալուստնին ետ դարձի բարեգուշակ նշան մը կը համար-  
ուէր։ Մէյ մըն ալ դուրը զարնուեցաւ. քզիւն էր, երկու  
զօրք ալ միասին։ Տանտիրոջը ըսաւ. «Չօրքերը կանչուեր  
են Երեզա եւ այս գիշեր պիտի հասնին Պոյալըս. հիմակ  
պլղուր կը ժողվենք, գուն ալ տուր, քիչ մըն ալ իւր։»

Ա՛լ գործը հասկցուեցաւ. վտանգ չի կար։ Փախստական-  
ները մառանն էին, պլղուրն ու եղն ալ հոն. տանտէրը  
մտաւ հոն եւ ըսաւ. «Հանգիստ եղիք, շունները կ'երթան,  
եւ պլղուր կը հաւաքեն։» Առաւ տարաւ։ Եւ մէկ ժամ  
վերջը ա՛լ զօրքերը ելած էին Հասան Օվայէն, ու Պոյալըս  
կ'երթային։

Փախստականները ուրախացան։ Չօրքը մեկնելով  
Արմուտաններէն թէ՛ գեղացիները կը հանգստանային, եւ  
թէ իրենք թափառականները կրնային քանի մը օր իրենց  
սիրելիներուն քով մնալ։ Նոյն գիշերը ետ դարձան, եւ  
Պատուելինց տունը գացին։ Ա՛լ աս անդամ հաճի մայ-

րերուն ալ լուր տալով տեսնուեցան։ Տանըրութ օր մնալէ  
յետոյ մնաց-բարոյնին ըսին ու կրկին անգամ ճամբայ  
ինկան զէպի Եկեղեցաց դաւառը, ուր հասան ապահով  
կերպով։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՄԱԿԱԲԱՅԵՑՑԻՈՑ ՎԱՆՔԸ

Տխարպէքիբէ կը գրեն մեզ.

Ժամանակին իմացուցի ձեզի Ասորիներուն ըրած փոր-  
ձերը տիրանալու մեր պատմական մեծ հաստատութեան,  
Մակաբայեցւոց վանքին։ Հայոց առաջնորդական տեղա-  
պահը թագրիւններով եւ զիմուսներով յաջողեցաւ արդիւն-  
աւալ Ասորիներուն սկսած սրբապիղծ շինութիւնները վան-  
քին մէջ, եւ անկից հեռացնել երեք ասորի վարդապետ-  
ներն ու երկու քահանաները, մինչեւ քննութիւն կատար-  
ուէր՝ որոշելու վանքին սեփականութեան իրաւունքը։

Իտարէի ժողովը իր որոշումը տուաւ ինպատար Հայոց,  
իր վճիռը հաստատելով իր երկրորդ անգամ զրկած երկու  
քննիչներուն տեղեկագրին եւ ասորի քահանային վանքին  
զողցած 80 կտոր արծաթեղէններու յիշատակարաննե-  
րուն վրայ։ Բայց ինչիրը զեռ վերջացած չէ, որովհետեւ  
հիմակ Պոլիս զրկուած է՝ Ասորիներու կաթողիկոսին  
պնդման վրայ։

Կ'արժէ մէկ քանի տեղեկութիւն տալ այս դարաւոր  
հառտատութեան վրայ, որուն կը կապեն մեզի այնքան  
յիշատակներ։

Վանքը «Մակաբայեցւոց» անունով կը յորջորջուի,  
ըստ աւանդութեան թէ Հրէից Մակաբայեցւոց սերունդէն  
Եղիազարի, Շամունէի և եօթը որդիներուն, որ Քս.է 276  
տարի առաջ նահատակուած էին Անտիոքոս կայսեր հրա-  
մանով, ոսկերտութեք այդ վանքին աւագ տաճարին ետեւ  
պարսպին տակ ամփոփուած են, մեծ կաղնիին մօտ ճր  
2,000 տարեկան ծառ մըն է ժողովրդին կարծիքով։ Այդ  
բազմադարեան կաղնին յիշեալ նահատակներուն աճիւնու-  
վը ուսմացած կ'ապրէր ցարդ իբրեւ անմոռանալի կոթող,  
սակայն անցեալ տարի Անթաղ զիւղի Գիւրա Հիւսէին  
քէհեան կարեց տարաւ զայն։

Վանքը «Առաքելոց» անունով եւս կը կոչուի, նախ  
վասն զի Քրիստոսի առաքելներէն Ս. Անդրէասի զանկը  
ամփոփուած էր վանքին աւագ տաճարին տակ. երկու լա-  
տին կղերականներ զողցան զայն, բայց չյաջողեցան տու-  
նել։ Երկրորդ՝ Քրիստոսի 42 թուականին Ս. Թադէոս  
առաքելային ձեռքով է հիմնարկուած, մօտ կարինիս զիւ-  
ղին, Անթաղի քով։

Դարձեալ այդ հաստատութիւնը «Սպիտակ վանք»

անունով եւս ճանչցուած է, անշուշտ իր բարձրագագաթ լերան սպիտակ հողին պատճառաւ, որուն վրայ է կառուցուած վանքը 1856 տարիներէ ի վեր:

Ս. Էջմիածնի նուիրակ Պօղոս արքեպիսկոպոսի շիրիմն ալ հոն է, որուն վրայ հետեւեալ արձանագրութիւնը ընթեռնելի էր գէպքէն առաջ. սակայն այժմ Ասորիները վանքին պատերուն և գերեզմաններուն բոլոր փորագրութիւններն ու թուականները և հայերէն գրերը արած, սրբաւ են իրենց նպատակին հասնելու համար:

Էջմիածնի նուիրակ Պօղոս արքեպիսկոպոսի

Որդի Կարբեցոյ Պրն. Եղիազարի

Եղիւ վախճան կենաց Ռնտական գեղի

Որ անտի բերեալ 'ի սոյն ամիոփի

Կնիք միաբան սրբոյ Ս. Էջմիածնի

Մերթ աթոռակալ Եփրեմի Վեհի:

Մօտ է այլ շիրմին սրբոյն Գրիգորի Նարեկացոյ բեռնի հրաշագործ հայրապետ Շիրակացի Յովհ. կաթողիկոսի հանգստարանը, որ կը կրէ իր խաչաքարին վրայ Գ. ի 850 թուականը:

Այլ նուիրական գերեզմաններէն զատ 10 կաթողիկոսի առաջններ եւս կան, Մակարայեցոց եօթը մանկանց հանգստարանին շուրջը, որոնք, Պարսից հալածանքներուն ժամանակ Էջմիածնէն փախչելով, հոս ապաստանած եւ հոս կնքած են իրենց մահկանացուն:

Մոռնանք այլ նշանաւոր վանքին միւս բոլոր հարստութիւնները թուել, յիշենք մինակ իր մէջ ունեցած երեք կտոր մասունքը, որոնց մին Ս. Թաղևոս առաքեալին աջ բազուկն էր արձաթապատ եւ ոսկեգօծեալ. միւս երկուքը ոսկի խաչեր որոնց մէջ Կենաց փայտի մասունք կային: Այլ սուրբ նշանները Լճէի Մուհամմէտ Սաիա ազան տարած է գէպքին եւ անփաս պահելով Սերաստիոյ կողմերը զրկած ծախած է:

Վանքը ունի իրեն կալուած 76 չարիկ սերմ ցանելու արտօրայք, 30 չարիկնոցը ջրարբի, 46 չարիկնոցը անջուր: Եօթը կտոր այգի, իւրաքանչիւրը 2000 օխայէն աւելի շիրա արտադրող, շրջապատեալ նշինիներով, որոնց մէ տարին 500 օխա նուշ կը քաղուեր. երկու ջրաղաց. մեծամեծ անտառներ, հաստաբերձ ծառերով, որոնց տերեւներովը տարին 1000 ոչխար կարելի էր պահել. այլ անտառներէն 50,000 հատ գերան գէպքէն ի վեր կարած տարած են Մըշրֆ գեղի եւ Անթաղի Հիւսկին քէհհան եւ իրենները: Ունէր նաեւ 200 հատի շափ եզ, կով, հորթ, զուլէշ, եւ 4-5 հարիւր ոչխար, այժ, ուլ ու դառ: Արարք գեղի Մահմուտ պէյը 180 հատ կիթան ոչխար գէպքէն առաջ տարած էր. ցարդ կը վայելէ:

Այլ հոյակապ և հարուստ վանքը կողպատողներն կին Լճէի կոյր Մուհամմէտ, Սաիա Մահմուտ, Հիւսկին, Մուհամմէտ Հաճի եւ այլն պէյերը, Եուսուֆ ազան, Փէշաոփ Թահիր զազա պէյը եւ այլ անձանաչ պէյեր եւ քէհհա-

ներ իրենց բարբարոս աշայիբի լէգէններովն ու ծառաներով:

Չորս հարիւր հայ երիտասարդ մարթոնեցան այլ վանքին մէջ. իրենց սկիբոտիքը լերան գագաթէն մինչեւ ըստօրոտը և դաշտին մէջ աստ անդ ձգուած կը մնային շուներէ կրծուած եւ անթաղ:

Այս վանքէն 60 հատ կոյս-ազլիկ և կնիկ տարուած կին գէպքին, որոնցմէ մէկ քանին բերուած են, իսկ մեծ մասը զեռ անձանօթ կը մնան. մաս մըն ալ ծանօթ քիւրտերու քով կը մնան ի կնութիւն, և ոմանք ծնած ալ են...:

### ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԸ ԵՒ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ

Անդլիոյ, Ամերիկայի, Գերմանիոյ, Զուիցերիոյ, եւ ընդհանրապէս Հայաստանի կարօտներուն, տնտեսներուն եւ որբերուն իրենց նպատար զրկող բոլոր երկիրներուն առջեւ, Կ. Պօլսոյ Հայոց պատրիարքարանը ծանր ամբաստանութեան մը ներքեւ կը գտնուի այս պահուս:

Ահա իրողութիւնը:  
Յայտնի է թէ Դուռը վերջերս փակել տուած էր Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ չորս որբանոց: Անդլիոյ խորհրդարանին մէջ այս մասին հարցումներ ուղղուեցան կառավարութեան, եւ Ուէսթմինսթրի զուբսին յանձնաժողովը յունուար 27ին յիշատակագիր մը ուղղեց լորտ Սուլպէրիի՝ բողոքելով «Դրան քմահաճ ու բարբարոս արարքին» զէմ, մինչ միւս կողմէ յանձնաժողովին ազգեցիկ անպաւնեղէն ոմանց ձեռքով մասնաւոր զիմում մը կ'ըլլուէր Վաշինկտըն՝ Միացեալ-Նահանգներու կառավարութեան մօտ:

Այս ամէնը իրենց բարբարոս արգիւնքը ունեցած ըլլալ կը թուին:

Լորտ Սուլպէրի Ուէսթմինսթրի զուբսին հաղորդած է Կ. Պօլսոյ անդլիական զեսպանին հետեւեալ տեղեկագիրը.

«Պատիւ ունիմ ծանուցանելու թէ նորէն ոստակի զիտողութիւններ ըրի Մեծ-եպարքոսին՝ թէ՛ թող չտալու համար որ ուրիշ հայ որբանոցներ զօցուին նորէն, եւ թէ՛ Զէյթունի, Բալուի, Տիարսկիքի եւ Չնքուշի որբանոցներուն վերաբացմանը համար: Մեծ-եպարքոսը ինձի ըսաւ թէ ներքին զործերու նախարարին տեղեկագիրն միայն կը սպասուր օրէ օր՝ ընկելքը որոշելու համար: Մեծ-եպարքոսը միեւնոյն ատեն իր հաւանութիւնը յայտնեց ինձի այն մարդասիրական շարժառիթներուն համար որոնք ներշնչած են այսպիսի հաստատութեանց հիմնարկումը: Յոյս ունիմ թէ յիշեալ չորս սրբանոցները պիտի վերաբացուին, եւ ուրախ եմ իմացնելու թէ վերջին վեց շաբթուան միջոցին՝ ուրիշ որբանոց զօցուած չէ: Կ'իտարնա

թէ Բաշուի եւ Տիարպէքիի որբանոցները գերման միսիս- նարներու հսկողութեանը տակ կը գտնուին առաւել կամ նուազ :

«Այս գործին մէջ՝ Միացեալ-Նահանգներու ղեսպան Պ. Օսգար Սյրաուս սրտեռանդն ու թանկագին աշակցու- թիւն մը նուիրեց ինծի, եւ վստահ եմ թէ պիտի յօժարի ինծի հետ միահաղոյն գիտողութիւն մը ուղղելու թիւրք կառավարութեան՝ եթէ իմ սեփական գիտողութիւնս փա- փաքելի արդիւնքը չունենայ :»

Նորագոյն տեղեկութեան մը նայելով, սուլթանը ար- ղէն հրամայեց է որ Տիարպէքիի որբանոցները անմիջա- պէս վերաբացուին :

Մինչ օտարներ այսքան եռանդով ու սրտցաւութեամբ կ'աշխատին մեր խեղճ որբերուն համար, ի՞նչ կ'ընէ Հա- յոց պատրիարքարանը :

Ուէսդմիսսիւրի դուքսին յանձնաժողովին Կ. Պոլսոյ թղթակիցը ամենաժանր ամբաստանութիւններ կը բարդէ Օրմանեան պատրիարքին վրայ : Այդ թղթակիցը կը գրէ .

«Տարակոյս չկայ թէ սուլթանը կաթողիկէ և լուսաւոր- շական Պատրիարքարաններուն տուած տեղեկութիւննե- րուն համեստ գործելով է որ իրատէ մը հանեց բողոքա- կան որբանոցներուն դէմ : Ազարեան եւ Օրմանեան պատ- րիարքները կրնան հետեւաբար մէջերնին բախել թիւրք կա- ռավարութիւնը երոպական բարենպաստակ հաստատու- թեանց դէմ հանած ըլլալու պատիւը, — կառավարութիւն մը որ անզուստ անզգար կ'աշխատի հայ ժողովուրդը ստրկու- թեան աստիճանին հասցնելու և որ սրտազին եռանդով կ'օշ- տուի եկեղեցական իշխանութեանց անսկսնունելի աշակ- ցութենէն՝ ամբրիկեան միսիսնարներուն թիւրքը կտրտե- լու համար : Վստահ եմ որ եթէ հայ կղերը ո եւ է տըր- տունջ ունէր այդ երոպական հաստատութիւններէն մեր- ժուելուն համար եւ իր արտունջը բարեկամաբար յայտնէր Սըր Ուիլիքմ Հոփթոլի (Կ. Պոլսոյ նպաստամատոյց յանձ- նաժողովին նախագահը) որ բանիմաց եւ ուղղադատ գոր- ծի-մարդ մըն է, անիկա պիտի համոզէր երիցական միսի- սնարութեանց տնօրէնները որ կարելի եղած զիջողու- թիւնները ընեն՝ կրօնական ուսուցման ժամերը աւելցնե- լու մասին : Փոխանակ ասոր, սիսան պաշտօնին մէջ ձեռքի տակէ մեքենայութիւններ սարքել, որոնք փափաքուած արդիւնքը ունեցան շուտով՝ չորս որբանոցներու փակու- մամբ, որոնց երկուքին ծախքը Բրուսիական Լուտերական Ընկերութիւնը կը հոգար զխաւորապէս : Ասոր արդիւնքը եղաւ այդ որբերը զրկել այն պաշտպանութենէն ու նիւ- թական օժանդակութենէն զոր Երոպայէն ու Ամբրիկայէն կը ստանային : Եստ Հայեր զգուանքով կը խօսին երկու պատրիարքներուն այս խնդրական քաղաքականութեանը մասին, որոնք կ'աշխատին Երլտըզին աչքը մտնել՝ յիմար նամակներ գրելով Մեծ-նպարքոսին, փոխանակ անկեղ- ծօրէն զիմելու Կ. Պոլսոյ նպաստամատոյց Յանձնաժողո- վին, որուն զլուխը կը գտնուին մեծայարդ ու ազատամիտ Անգլիացիներ ու Ամբրիկացիներ :»

Ինչպէս կը տեսնուի, գրողը իր բառերը չի ծածկեր :

Հրապարակաւ, կ'ամբաստանէ երկու հայ պատրիարքները թիւրքին անարդ գործիքները ըլլալ ի վնաս խեղճ հայ որ- բերու :

Օրմանեան սրբազան, որ պարտաւոր է համար տալ ազգին, ի՞նչ պիտի պատասխանէ ասոր : — Այս հարցումը չենք ուղղեր Ազարեան պատրիարքին, որ արդէն իր գոր- ծերուն համար հաշիւ տալու սովորութիւնը չունի :

Պատրիարքին վերջին կոնդակին մէջ, որուն ամփո- փումը կը հրատարակեն անգլիական թերթերը, խնդիրը շօշափուած է, առանց սակայն մեզի գաղափար մը տալու : Պատրիարքարանին թաքուն զիտաւորութեանց մասին :

Այդ կոնդակով, որ ուղղուած է Հայ եկեղեցիին բո- յոր անդամներուն, պատրիարքը կը յորդորէ զիրենք ան- խախտ մնալ իրենց հաւատքին մէջ : Խորին երախտագի- տութեամբ կը խօսի արտասահմանէն ստացուած նպաստ- ներուն մասին, եւ զիտել կուտայ թէ օտար նուիրատունե- րը երբեք զիտաւորութիւն չեն ունեցած խնդրել Հայերէն որ հաւատքին փոխեն՝ նպաստ ընդունելու համար : Նը- պաստ բաշխող ինչ ինչ գործակալներու վարմունքը, որոնք նպաստի համար տրուած զբաժը բրոբականտայի կը ծա- ոայեցնեն, յայտնի բռնաբարում մըն է օտար նուիրատու- ներուն վեհանձն և մարդասիրական զիտաւորութեանց : Պատրիարքը յետոյ ջերմ կոչ մը կ'ուղղէ հայ ազգին բո- յոր դասակարգերուն՝ օգնելու իրենց թշուառ եղբայրնե- րուն :

Կաթողիկէ Հայոց պատրիարքարանին պաշտօնեանե- րէն մին վերջերս տետրակ մը հրատարակելով՝ կը յար- ձակէր Հայ Եկեղեցիին եւ անոր հաւատալիքներուն վրայ : Ի պատասխանի այս հրատարակութեան, Օրմանեան սըր- բազան կը յիշէ վարդապետութիւնը Հայ Առաքելական Եկեղեցիին, որ բրիտանականութեան սկիզբները հաստատ- ուած է : Պատրիարքը կը խօսի նաեւ Եկեղեցիներու միու- թեան մասին, և կ'ընդունի թէ փափաքելի է իրապէս տիե- ղերական միութիւն մը, որուն մէջ սակայն ոչ մէկ մաս- նաւոր Եկեղեցի գերակշիռ ազդեցութիւն ունենայ : Եկեղե- ցիներուն Միութիւնը հիմնուելու է Առաքելական ժողո- վին օրինակին վրայ, որոնք ամենքը եղբայր կին, իրենց ի զուտ ունենալով Յիսուս Քրիստոս : Բոլոր Առաքելական Եկեղեցիները սակայն որոնք առաջին երեք եկեղեցական ժողովներուն աւանդութիւնները եւ կանոնները կը պահ- պանեն, եղբայրական կապերով միացած են : Կոնդակը կը վերջանայ նոր կոչով մը բոլոր Հայերուն՝ հաւատարիմ մնալու իրենց Եկեղեցիին, եւ կը թախանձէ բոլոր անոնք որ անից բաժնուած են՝ իրենց փորախը գտնալու նո- րէն :

Կրօնական պետ մը անշուշտ իրաւունք ունի եւ պար- տի իր հօտը յորդորելու անխախտ մնալ իր հայրերուն հաւատքին մէջ, եւ կը յիշենք թէ Ուէսդմիսսիւրի դուքսը ինքն էր որ ամէնէն առաջ իր յարգանքի հարկը մատուց Հայ Եկեղեցիին, եւ դատապարտեց բրոբականտայի ա- մէն ձեռնարկ Հայաստանի մէջ : Բայց խնդիրը հօն է որ Հայոց պատրիարքարանը, Հայ եկեղեցիին շահերուն ան-

հարկի նախանձանդրութեամբ մը, իրօք մութին մէջ աշխատած է փակել տալու որբանոցները, եւ այսպէս լքեման ու անօթութեան մասնելու հարիւրաւոր խեղճ տղաքներ:

Աբաստանութիւնը հրապարակաւ եղաւ Լ'ոնտոն, Ուէոգմինսդրի գուբախն յանձնաժողովին պէս նշանաւոր մարմնի մը կողմէ: Հայոց հաւաքական պատուին համար, պէտք է որ Հայոց պատրիարքը նոյն յանձնաժողովին միջոցաւ հրապարակէ իր արդարացումը... եթէ ունի սակայն:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ՍԳԱԻՈՐ ԵՐԿԻՐ ՄԸՆ ԱԼ

Անգլիացի մը որ աս փետրուարին Ֆինլանտական գեղ մը այցելած է, կը գրէ. «Աբրող զեղը մեծ սուղի մէջ տեսայ, մահաստանի պէս լուսնիստ: Եկեղեցին վերէն վար սեւապատ, ու տան պատուհաններէն սեւ դօշալներ: Տղաքը ո՛չ կը կանչուրտեն, ո՛չ կը խաղան. կարգախօսի մը հնազանդելով: Կ'ենթադրեմ թէ բնազգով կը զգային ազգային, ընտանեկան սուգը, ու անոր համեմատ կը վարուէին: Աս երկարատեւ կիրակիին պտոյտներուս եւ այցելութիւններուս ատեն չհանդիպեցայ ուրախ զուարթ, զէմքը գոհ մէկու մը:»

Ինչո՞ւ այս տրտմութիւնը: — Ռուսիոյ կառավարութիւնը Ֆինլանտան կը մերկացնէ իր դարաւոր իրաւունքներէն: Առանձնաշնորհեալ Մեծ-դքսութիւնը ռուսական նահանգի մը կը վերածուի հետզհետէ, ուր զօրեղ ձեռքով առաջ պիտի տարուի ռուսացումի քաղաքականութիւնը: Սուգի եւ տրտմութեան մէջ է Ֆինլանտան. կը զայրանայ, կը բորբոքի, բայց ի՞նչ օգուտ:

Սկանաւինավեան թերակղզիին և Ռուսիոյ միջեւ զբանուող Ֆինլանտական Մեծ-դքսութիւնը որ 2,500,000 բնակիչ ունի, մինչեւ 1809 Շուէտի մաս կը կազմէր. այդ թուականին Ռուսիոյ անցաւ, Նաբուլեոնի պատերազմներուն հետեւանքով: Ֆինլանտացիները այս փոփոխութեան ըզձացող չէին, բայց ուժին միջամտութեան առջեւ հարկադրուեցան տեղի տալ:

Արեւմտահայ Ս իր ակամայ հպատակները սիրաշահելու նպատակաւ ուզեց անելի իբր խնամակալ պաշտպան մը ներկայանալ անոնց քան աշխարհակալող մը: Զարը «ըստ օրէնքներու և կանոններու» Ֆինլանտայի Ազգային Ժողովը Պորկո քաղաքը կը գումարէր, ուր եւ ինքն ալ անձամբ կ'երթար եւ կը ստորագրէր «երաշխաւորագիրը» որով «կը հաստատէր, կը վաւերացնէր, և կը խոստանար անուստան ու անխախտ պահպանել՝ իրենց բոլոր զօրութեանը մէջ՝ երկրին կրօնքը, հիմնական օրէնքները, ինչպէս նաեւ այն բոլոր առանձնաշնորհումները եւ իրաւունք-

ները որ ամէն դասակարգ առանձինն առանձինն եւ բոլոր բնակիչները ընդհանուր կերպով վայելած էին Սահմանադրութեամբ:»

Զարը քննեց ռուսաւարտից Ֆինլանտայի օրէնքները ու Սահմանադրութիւնը, եւ 1810 մարտ 13ին կը վերահաստատէր իր առաջադրութիւնը որ էր «Ֆինլանտան իբր ազատ և սահմանադրութեամբ երաշխաւորուած իրաւունքներ վայելող ազգ մը կառավարել:» Բայց երգմնագանցութիւնը շուտ սկսաւ, եւ սեւեց մինչեւ 1855: Այս թուականին Արեւմտահայր Բ գահակալելով մարտ 3ին վերանորոգեց ինչ որ 1809ին իր հօրեղբայրը խոստացած էր անվճար պահպանել: Միանգամայն նորանոր առաւելութիւններ ալ շնորհեց: Ազգային Ժողովը որ կը բաղկանայ ազնուականութեան, կղերին, քաղքենի դասակարգին եւ գեղացիներու ներկայացուցիչներէն, սկսաւ կանոնաւորապէս դումարուիլ պարբերական շրջաններով: Ֆինլանտան օրինապահ ուղղութեամբ կապուած մնաց կայսրութեան մը սրով զինքը կը բաժնեն կրօնք, լեզու, բարք, օրէնք: Երբ Նիքոլա Բ գահակալեց ինքն ալ 1896 նոյեմբեր 6ին ստորագրեց երաշխաւորագիր մը սրով կը յայտարարէր թէ «կը հաստատէ եւ կը վաւերացնէ կրօնքը, հիմնական օրէնքները եւ այն իրաւունքներն ու առանձնաշնորհումները զոր ամէն դասակարգ առանձինն առանձինն եւ բոլոր բնակիչները ընդհանուր կերպով մինչեւ աս ատեն վայելած են ըստ երկրին Սահմանադրութեան:» Կայսերական մեծափառ ուխտագիրը բոլոր եկեղեցիները փակցուեցաւ, իբր երաշխաւորութիւն վեհապետական անդրմելի խոստումի:

Եւ սակայն հիմա Նիքոլա Բ ռոսակոխ կ'ընէ իր նախաձեռնումն եւ իր իսկ վեհապետական երգումը: Բեղրպուրկի գահիճը քանի մը տարիէ ի վեր կը ջանար Ֆինլանտացիներէն մէկիկ մէկիկ խլել իրենց իրաւունքները եւ առանձնաշնորհումները: Այս նպատակին հասնելու համար նախ անուղղակի միջոցներ գործ դրուեցան, որոնց մէջ էր ռուսական լեզուին ընդհանրացումը: Վերջերս որոշուեցաւ անելի կտրուկ քաղաքականութեան հետեւիլ: Յունուարի մէջ կայսերական հրովարտակ մը Ֆինլանտայի բոլոր օրէնքները ջնջեց, մանուածապատ ձամբանելով: Ֆինլանտայի Մեծ-դքսութիւնը այլ եւս պարզապէս ռուսական նահանգ մըն է, եւ քիչ ժամանակի մէջ պէտք է բոլորովին ռուսանայ:

Հարուածը ահեղ էր. 500 Ֆինլանտացիէ բաղկացած պատգամաւորութիւն մը, հետը առնելով 563,000 ստորագրութեամբ հանրագիր մը, ելաւ Բեղրպուրկ գնաց. ձարը ո՛չ պատգամաւորութիւնը ընդունեց, ոչ ալ անոր ինդիրքներուն պատասխան մը տուաւ: Ֆինլանտայի ռուսացումը վճռուած էր:

Պաշտօնական շրջանակներու մէջ կը յայտարարուի թէ 1803ի խոստումներուն նպատակն էր Ֆինլանտայի ձամբայ հարթել զէպի ռուսացում. սակայն ահա մէկ դար է որ աս վիճակը կը տեւէ, եւ Ֆինլանտայի ժողովուրդը չ'ուզեր ինքնաբերաբար ռուսանալ, ուրեմն բռնի միջոցներու զիմելու ժամանակն է:

Երոպական մասուր Ֆինլանտայի դասը կը պաշապանէ: Ֆրանսական թերթերը որոնց ուսասիրութիւնը կասկածի տակ չէ, կը բողոքեն ձարին երզմնազանցութեանը դէմ: Թան այս խնդրին նուիրած խմբագրականը կը վերջացնէ հետեւեալ տողերով. «Լա Հէ դեսպանախորհուրդ գումարուելու նախընթաց օրը՝ զէնընկեցութեան յայտագրին հեղինակը պիտի ուզէ՞ ամբողջ Երոպայի աչքին հերքում տալ իր մարդասիրական խորհուրդներուն եւ իր ազատասիրական լեզուին:»

Բայց ո՞վ պիտի կրնայ զիմաղրել Ռուսիոյ ահեղ զօրութեանը երբ կը ջախջախէ փոքրիկ Ֆինլանտան:

Փորձը անգամ մըն ալ ցոյց չի տար թէ Ռուսիան սայթաք ուղղութեամբ առաջ կը տանի ձարին բոլոր հրպատակներուն ուսացումի քաղաքականութիւնը: Ֆինլանտա Ռուսիոյ էն զարգացած եւ էն բարգաւաճ մէկ նահանգն է, ու խաղաղաւէր Ֆինլանտացիները Ռուսիոյ ուղղամիտ բարեկամներն են: Եւ սակայն սէր կամ ատելութիւն, հաւատարմութիւն կամ անհաւատարմութիւն համանիչ են Ռուսիոյ քաղաքականութեան համար: Մեծ ծրագիր մը կայ զոր պէտք է իրականացնել երկաթէ ձեռքով՝ — ամբողջ Ռուսիան մէկ լեզու, մէկ օրէնք, մէկ կրօնք: (Կրօնքը լեզուէն ետքը պիտի դայ:) Կովկասի Հայերը այս ծրագրին ինչպէս զործադրուիլը գիտեն:

Ա. Ա.

ԼՈՒՐԵՐ

Բիշոփի ըղբակիցը կը գրէ Կ. Պոլսէն.

«Բաղէշէն սուրհանդակով ստեղծած լուրերը կը յայտնեն թէ խաւանարանները կը տիրէ այդ քաղաքին մէջ: Անցեալ տարուան հոկտեմբերի խռովութիւնէն ի վեր՝ սպանուողները վերանաստատուած չէ: Պայրամի առեւ խաւանարանները վարանները դեպի Հայերը շատ բշտամակն կը, և փետրուար 14ին ընդհանուր անոռոյ տիրեց: Շատ խանութներ գոց էին, բայց յետոյ բացուեցան ուստիկանութեան հրահանով: Յաջորդ օրը ետրէն անոռոյ տիրեց, և 20 Հայ ձերբակալուեցան: Փետրուար 18 ին տեսնուեցաւ թէ ուստիկանութիւնը բացառիկ միջոցներ ձեռք կ'առնէր Բաղէշի Չարկոր (°) քաղիէն մէջ, որպէս թէ խռովութեան մը վախը ունենար: Մայրամուտքէն քիչ յետոյ, ուստիկանները պաշարեցին տաներէն մին եւ փորձեցին ներս մտնել, բայց պատուհաններէն մէկէն թեփուլիքի հարուած մը պայթեցաւ, և զինուորներէն մին դիտարկուող գետին

իսկաւ. ստոր վրայ միշտները փոքրով ետ քաշուեցան: Կարծելով թէ գորքերը բոլորովին մէկնած էին, մարդ մը տռնէն դռնը ելաւ, բայց զինուորները, որոնք պահուրտած էին, զարկին զանի: Տակը մէջ ուրիշ ոչ ոք կը գրտնոռէր բայց եթէ պառաւ մը, որ ձերբակալուեցաւ: Հաստատուեցաւ թէ զարեւոյստ երիտասարդ Հայ մըն էր, որ երկու տարի արտասահման գտնուած էր եւ զեւ նոր վերադարձած: Տակը շրջակայքը բնակող Հայերէն տասնի չափ մարդ ձերբակալուեցան այս դեպքին վրայ, բայց յետոյ արձակուեցան, որովհետեւ ո եւ ի փաստ չկար իրենց դէմ: — Երբքի սեռն թիշրքը, որ սեցեալ հոկտեմբերին հայ ոսկերիչ մը սպաննած էր, սեպտարտ արձակուեցաւ: Այդ բռնակալի նմարագործութեանը արեստատուած բոլոր խալաններն ալ սակից առաջ արձակուած էին:»

— Տիարպէրի մէջ ալ միշտ անոռոյր անպակաս է: «Սրսնտարտ» ի տեղեկութեանց նայելով, վերջերս Տիարպէրի խալաններն մէջ դաշադրութիւն մը երէշան հանուներ է: Պարագոյն խալանները ձերբակալուներ և Կ. Պոլսի տարուներ են դատուելու համար, իսկ Կ. Պոլսի գրտնոռոյ Տիարպէրիցիները խիտ անոռոյութեան տակ առնուներ են:

— Բեղրպոլսի «Տէշի Թեղիկրափ» ի ուղղուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Թիշրքի վերջապէս սկզբաւ հաշաներ է ընդունելու Կովկաս գաղթած հայ գաղթականները: Միայն թէ Դուշը կը կարծէ որ ոռուսիկան ծանուցագրին մէջ յիշուած թիշը (45,000 հոգի) շատ չափազանցուած է:

ՀԱՍՑԷ ՈՒ ԲԱԺՆԵՂԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեղին զրկել առ

L. FRANK,  
309, LADBROKE GROVE,  
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեղինն է Երոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար: